



ADVANCED
SOCIAL
TECHNOLOGIES

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ*

**ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Երևան, Հայաստան

2010

Ծրագրային Բյուջետավորման Վերլուծություն

Բովանդակություն

| | |
|---|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 4 |
| ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 7 |
| ՈԼՈՐՏՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | 13 |
| ԾԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ | 16 |
| ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 27 |
| ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ..... | 30 |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... | 43 |
| ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ..... | 44 |
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐ..... | 46 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... | 47 |
| Հավելված Ա-1. Կրթության ոլորտի ծրագրերի վերադասակարգման աղյուսակ..... | 48 |
| Հավելված Ա-2. Առողջապահության ոլորտի ծրագրերի վերադասակարգման աղյուսակ | 59 |
| Հավելված Ա-3. Ջրի ոլորտի ծրագրերի վերադասակարգման աղյուսակ..... | 64 |
| Հավելված Բ-1. Կրթության ոլորտի ծրագրերի դեագրեգացված աղյուսակ (միջազգային համադրությունների համար)..... | 68 |
| Հավելված Բ-2 ԾԲ Աղյուսակների ներկայացում GDN դասակարգման համապատասխան | 70 |
| Հավելված Գ. Պետական բյուջեի առողջապահության ծրագրերը/ծառայությունները | 73 |

Սույն հաշվետվությունը՝ Օգուտներիի Բաշխման Վերլուծության հետ միասին, կփորձի համախմբել որոշ առանցքային բյուջետային տեղեկատվություն, որն օգտակար կլինի որոշումների կայացման համար: Այս հաշվետվությունը պատրաստելիս, փորձագետների խումբը վերլուծել է երեք ոլորտների բյուջետային տեղեկատվությունը և փորձել է ներկայացնել ծրագրային բյուջետավորման մասին պահանջվող տեղեկատվությունը՝ արդյունքերին առնչվող տվյալներին համապատասխան: Վերը նշված երկու կետերը հիմք են հանդիսանում ծրագրային բյուջետավորման վերլուծության համար, որի նպատակը քաղաքականությունների և բյուջեների կապակցումն է:

Հաշվետվությունը պատրաստվել է Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ կողմից՝ GDN «Հանրային ծախսերի հաշվետվողականության բարելավման նպատակով ինստիտուտների զարգացման» ծրագրի շրջանակներում: Հաշվետվության հեղինակներն են Հայկ Մաղաքյանը (կրթություն), Հովհաննես Մարգարյանը (առողջապահություն), Գևորգ Նազարյանը (ջրային տնտեսություն) և Սուրեն Պողոսյանը (ծրագրի ղեկավար):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը նախկին Խորհրդային Միության (ՆԽՄ) փոքր, անցումային երկիր է՝ ընդամենը 3 միլիոնից մի փոքր ավելի բնակչությամբ: Տնտեսության և կառավարման հիմնարար բարեփոխումները սկսվել էին անմիջապես ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1991թ.-ին: Բարեփոխումների առաջին սերունդը նպատակաուղղված էր կառավարման նոր ինստիտուտների ստեղծմանը, կենտրոնական կառավարության իշխանության ապակենտրոնացմանը և ապակոնցենտրացմանը, նախկին ազգային ակտիվների լայնածավալ սեփականաշնորհմանը և այլն:

Վերը նշվածին զուգահեռ, երկիրը հրաժարվեց նախկին խորհրդային բազմօղակ վարչական բաժանման համակարգից, որը ներառում էր հանրապետություններ, մարզեր (область), շրջաններ ու համայնքներ և անցավ շատ ավելի պարզ համակարգի, որն ավելի հարմար էր նման փոքր չափի երկրի համար: Այսպիսով, ի տարբերություն տարածաշրջանի և ՆԽՄ պետությունների, Հայաստանն ունի միայն երկօղակ կառավարման համակարգ՝ ազգային և համայնքային (տեղական ինքնակառավարման մարմիններ - ՏԻՄ):

Կենտրոնական կառավարությունն ունի նաև ներկայացուցչական կառույցներ՝ ըստ երկրի տարածքային բաժանման ստեղծված տասը մարզերից յուրաքանչյուրում: Ինչևէ, այս միավորները (մարզպետարաններ) կառավարման անկախ մակարդակ չեն հանդիսանում և ձևավորվում են ազգային (կենտրոնական) կառավարության նշանակված անձնակազմի միջոցով՝ նախարարությունները մարզերում ներկայացնելու նպատակով: Մարզպետարանների այդ գրասենյակներն ազգային կառավարության մասն են կազմում և ֆինանսավորվում են պետական բյուջեից:

Ցավոք, ցածր կարողությունները և նոր իրավունքների ու պարտականությունների ստանձման ցածր մակարդակը ՏԻՄ մակարդակում հանգեցրել են ՏԻՄ-երում վարչարարության մշակույթի աննշան փոփոխությունների: Տեղական ինքնակառավարման մարմինների մեծամասնությունը դեռևս ակնկալում են զգալի աջակցություն ազգային կառավարությունից, չնայած նրան, որ իրականացվել են անհրաժեշտ օրենսդրական և վարչական ապակենտրոնացման նախաձեռնությունները:

Որպես վերը նշվածի արտացոլում, տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս հիմնականում կախված են պետական բյուջեից հատկացվող ուղղահայաց սուբսիդիաներից՝ իրենց բյուջետային կարիքները ֆինանսավորելու նպատակով: ՏԻՄ-երը գեներացնում են իրենց սեփական եկամուտները, սակայն սեփական եկամուտների

և սուբսիդիաների ընդհանուր գումարը, որպես կանոն, չի գերազանցում ՀՆԱ 2%-ը (պետական բյուջեի 5-6%-ը):

Ներկա պահին երկրին հաջողվել է ձևավորել պետական կառավարման համակարգ՝ անցումային բարեփոխումների 1-ին սերնդի համար ընդունելի մակարդակով և այն սկսել է հետագա բարելավումները՝ այսպես կոչված 2-րդ սերնդի բարեփոխումները: Ի տարբերություն նախորդի, վերջինս նպատակ ունի բարձրացնել ներդրված կառավարման մոդելի նպատակային և ֆունտեսական արդյունավետությունը: Վերը նշվածի ասպեկտներից մեկը Պետական Ֆինանսական Կառավարման (ՊՖԿ) համակարգերում ընթացող բարեփոխումներն են: Հայաստանը բյուջետային համակարգի բարեփոխումների առաջին հաջողակներից մեկն էր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են միջնաժամկետ բյուջետավորումը, բյուջեի կատարման կարգապահությունը (գանձապետական համակարգի կենտրոնացում), և այլն: Այս նվաճումների հետ մեկտեղ առկա է դանդաղ առաջընթաց ՊՖԿ բարեփոխումների այլ ասպեկտներում, ինչպիսիք են ծրագրային բյուջետավորման ներդրումը, հաշվապահական, աուդիտի բարեփոխումները և այլն:

Այն երեք ոլորտները, որոնց անդրադառնում է սույն հաշվետվությունը, հետևյալն են. առողջապահություն, կրթություն և ջրային ոլորտի կառավարում: Այս բոլոր ոլորտներում վերջին տարիներին իրականացվել են զգալի փոփոխություններ, որոնք ազդել են այդ ոլորտներում բյուջետավորման համակարգերի վրա: Ինչևէ, չնայած նրան, որ ոլորտի բարեփոխումները բավական լիբերալ են եղել (ներառյալ բյուջետավորման հատվածը), կոնցեպտուալ անցումը դեպի նոր քաղաքականության քննարկում և ձևավորում (որտեղ բյուջեի հատկացումներն արտացոլում են քաղաքականության որոշումները) դեռևս չափազանց դանդաղ է ընթանում:

Բացի դրանից, բոլոր երեք ոլորտների ծառայություններ մատուցող հիմնարկների ֆինանսական/ֆիդուցիար անկախության մակարդակը բավական բարձր է, քանի որ դրանցից ոչ մեկը ներկայումս ԲԳԿ¹ չի հանդիսանում: Արդյունքում պետական բյուջեն արտացոլում է կրթության և առողջապահության ոլորտներին հատկացումների ընդհանուր գումարը (ըստ միջոցառումների/ծրագրերի) և ԲԳԿ-ների պարտավորությունները (օրինակ՝ Առողջապահության նախարարություն, մարզպետարաններ): Նույնիսկ ավելին, պետական բյուջեում նման հատկացումները գրանցվում են որպես “գնված ծառայություններ” և համապատասխան ԲԳԿ-ները կնքում են ծառայությունների մատուցման պայմանագրեր դպրոցների կամ առողջապահական հաստատությունների հետ (մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորում, մեկ դեպքի հաշվով ֆինանսավորում): Այսպիսով, ինչպես ցանկացած այլ ծառայության գնման

¹ ԲԳԿ – Բյուջետային գլխավոր կարգադրիչ

դեպքում (մասնավոր ոլորտի հիմնարկությունների կողմից մատուցված ծառայություններ), պետական բյուջեն չի արտացոլում նման ծախսերի տնտեսագիտական դասակարգումը (մուտքեր), օրինակ՝ աշխատավարձը: Այս պատճառով է, որ Հայաստանի բյուջեում աշխատավարձի բաղադրիչը բավականին ցածր է (10%-ից ցածր, սովորաբար 5-7%) և բյուջեի մեծ մասը կազմում են մեկ տողով ֆինանսավորվող ծախսային հոդվածները (ապրանքների և ծառայությունների գնումներ, սուբսիդիաներ, դրամաշնորհներ):

Հայաստանում նախադպրոցական հաստատությունները չեն պատկանում ազգային կառավարությանը, այլ մասնավոր են կամ համայնքային: Բոլոր դեպքերում էլ պետական բյուջեն ուղղակիորեն չի ֆինանսավորում նախադպրոցական հաստատությունները, սակայն դրանք կարող են աջակցություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնք հատկացումներ են կատարում տեղական բյուջեներից, որոնք իրենց հերթին զգալի միջոցներ են ստանում պետական բյուջեից: Ամեն դեպքում, կրթության նախադպրոցական մակարդակը սույն հաշվետվության շրջանակներում ներառված չէ:

Դպրոցների գերակշիռ մեծամասնությունը Հայաստանում պետական են և պատկանում կառավարությանը: Վերջինս ունի երկու գործիք՝ երկրում ընդհանուր կրթության ոլորտը կառավարելու համար. ա/ քաղաքականությանն առնչվող, երբ դպրոցները հաշվետու են Կրթության և գիտության նախարարությանը և բ/ ֆինանսական, երբ դպրոցները հաշվետու են մարզպետարաններին, որոնք իրականացնում են այդ գործունեությունը՝ Կրթության և գիտության նախարարության քաղաքականություններին և Ֆինանսների նախարարության բյուջետավորման կանոններին համապատասխան:

Առողջապահական հաստատությունները Հայաստանում 90-ական թթ. և նոր դարի սկզբում անցել են լայնածավալ սեփականաշնորհման և ապակոնցենտրացման բարեփոխումների միջով: Արդյունքում դրանց զգալի մասը չի պատկանում կենտրոնական կառավարությանը, այլ մասնավոր են կամ պատկանում են համայնքներին: Կառավարությունն ունի փոքր վարչական վերահսկողություն առողջապահական հաստատությունների նկատմամբ, սակայն պետական բյուջեն դեռևս խոշոր դեր է խաղում ոլորտի ֆինանսավորման հարցում: Տնային տնտեսությունների առողջապահական ծախսերը առողջապահական ոլորտի ֆինանսավորման հաջորդ ամենամեծ բաղադրիչն են: Ինչևէ, գրպանի փողերի (անօրինական, չգրանցված և այլն) մեծ մասնաբաժնի պատճառով դժվար է գնահատել տնային տնտեսությունների մասնաբաժնի իրական չափը: Ըստ մեր ուսումնասիրության գնահատականների, այն կազմել է առողջապահական ոլորտի ծախսերի ավելի քան 35%-ը՝ 2008թ. համար: Ամեն դեպքում, բացի տնային տնտեսությունների ուղղակի վճարումներից, չկան ոլորտի

հիմնական և կայուն ֆինանսավորման այլ աղբյուրներ, բացառությամբ պետական բյուջեի (կրթական ոլորտի նման, դոնորների կողմից տրամադրված միջոցներն ուղղվում են պետական բյուջեի միջոցով, չնայած, որ սույն հաշվետվության նպատակներից էլնելով, մենք աշխատել ենք անջատ դիտարկել այդ միջոցները):

Նման պատկեր է նաև ջրային ոլորտում, որտեղ (կրկին, տնային տնտեսությունների ուղղակի վճարներից բացի) պետական բյուջեն (ներառյալ պետական բյուջեի միջոցով ուղղվող հիմնական դոնոր ծրագրեր) հանդիսանում է սուբսիդավորման և ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու խոշորագույն աղբյուրը: Որոշ հիմնական ջրամատակարարներ, օրինակ՝ Երևան քաղաքի օպերատորը, պակասեցնում են ստացվող սուբսիդավորումը, սակայն ջրամատակարար ընկերությունների մեծամասնությունը (եղնելով բոլոր տարածքներում ենթակառուցվածքների համահունչ զարգացման սոցիալական կարիքից) դեռևս կախված են պետական ֆինանսավորումից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունում սահմանված ծրագրերն արտացոլում են այն հիմնական քաղաքականությունների ոլորտները, որոնք գոյություն ունեն նշված երեք ոլորտներից յուրաքանչյուրում: Այսպիսով, հաշվետվության մշակման առաջին փուլում, մշակվել է ծրագրերի ցուցակ (օգտագործելով ծրագրային բյուջետավորման հայեցակարգերը և մեթոդաբանությունը): Այնուհետև սկսվեց անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման գործընթացը, որի նպատակն էր պաշտոնական բյուջետային տեղեկատվության օգտագործումը՝ մշակված ծրագրերին ծախսերը բաշխելու համար: Դա իրականացնելու համար ԱՄՏ-ի փորձագետներին անհրաժեշտ էր մշակել փոխկապակցման գործիք, որը հեշտ կերպով ցույց կտար և կբաշխեր ըստ միջոցառումների կազմված բյուջետային տեղեկատվությունը (որը ներկայումս գոյություն ունի բյուջետային փաստաթղթերում) նոր մշակված ծրագրերին: Օրինակ՝ մոտ 55 միջոցառումներ, որոնք ներկայումս օրենքով ներկայացնում են կրթական ոլորտի ծրագրերը փոխկապակցվել են ծրագրային բյուջետավորման սկզբունքներով ձևավորված՝ 10 ծրագրերին: Նմանապես, առողջապահական ոլորտի 56 ծրագրեր/միջոցառումներ ագրեգացվել են 6 ծրագրերի մեջ: Փոխկապակցման աղյուսակները կցված են սույն հաշվետվությանը²:

Օգտագործված տվյալների աղբյուրները.

- “Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների – Կրթություն 1Է” ձևի պատրաստումը հիմնված է ՀՀ ՖՆ գանձապետարանի տարեկան

² Տես Հավելվածներ Ա-1, Ա-2, Ա-3 և Գ

հաշվետվությունների (2006-2008թթ. համար), 2009թ. պետական բյուջեի և 2010թ. պետական բյուջեի նախագծի վրա:

- Առողջապահական և ջրային ոլորտների “Ֆինանսավորման աղբյուրներն ըստ ոլորտների, 2008 (5)” ձևում առկա՝ 2008թ. տնային տնտեսությունների ծախսերի տվյալները հաշվարկվել են օգտագործելով ԱՍՏ-ի ուսումնասիրության արդյունքները՝ Օգուտի Բաշխման Վերլուծության համար:
- Կրթական ոլորտի “Ֆինանսավորման աղբյուրներն ըստ ոլորտների, 2008 (5)” ձևում առկա՝ 2008թ. տնային տնտեսությունների ծախսերի տվյալները վերցվել են 2009-2011թթ. Միջնաժամկետ Ծախսային Ծրագրից:
- ՀՆԱ-ի, ինչպես նաև 2006-2008թթ. փաստացի բնակչության թվաքանակի մասին տվյալները վերցվել են Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ հաղորդագրություններից և Բյուջեի Ուղերձներից:
- Միջնակարգ ընդհանուր կրթության աշակերտների թվաքանակի մասին տվյալները 2005-2006թթ., 2006-2007թթ., 2007-2008թթ. և 2008-2009թթ. ուսումնական տարիների համար ստացվել են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների բազայից:
- Առողջապահական ծրագրերի աղբյուրներն են հանդիսանում Ֆինանսների նախարարության կայքէջը՝ ֆինանսական տվյալների մասով, և Մտողապահության նախարարության “Առողջություն և առողջապահական վիճակագրություն 2009” հրատարակումը:
- Ոլորտների բյուջետային ծրագրերին առնչվող այլ տվյալները և ֆինանսական տեղեկատվությունը ստացվել են Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներից և Բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններից՝ պահանջվող ժամանակահատվածների համար:

Կրթություն

Ծրագրերի վերախմբավորում

Հայաստանի կրթական ոլորտի ծրագրային բյուջետավորման վերլուծության նպատակով, պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերը վերախմբավորվել են հետևյալ ծրագրերի մեջ³.

| <i>Ենթաօլորտները Հայաստանում</i> | <i>Ծրագիր</i> | <i>ԶՀՑ-ի (GDN) կողմից օգտագործվող ենթաօլորտներ</i> |
|--------------------------------------|--------------------|--|
| Միջնակարգ ընդհանուր կրթություն | 1. Տարրական դպրոց | Տարրական կրթություն |
| | 2. Միջնակարգ դպրոց | Միջնակարգ կրթություն |
| | 3. Ավագ դպրոց | |
| Նախնական | 4. Նախնական | |

³ Սույն ծրագրերի դասակարգումը առավել մոտ է երկրում կիրառվողին: Այնուամենայնիվ, միջազգային համադրություններ իրականացնելու նպատակով ներկայացվում է նաև GDN ծրագրի կողմից կիրառվող դասակարգումը. Տես հավելվածներ Բ-1 և Բ-2

| | | |
|--|--|--|
| մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն | մասնագիտական (արհեստագործական) կրթություն | |
| Բարձրագույն և հետբուհական կրթություն | 5. Միջին մասնագիտական կրթություն 6. Բարձրագույն (բակալավրիատ և մագիստրատուրա) մասնագիտական կրթություն 7. Հետբուհական մասնագիտական կրթություն | Բարձրագույն կրթություն |
| Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն | 8. Արտադպրոցական դաստիարակություն 9. Լրացուցիչ կրթություն | Այլ կրթություն |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 10. Կրթության կառավարում և օժանդակ ծառայություններ | Գերատեսչական և տարածքային կառավարում |

Կիրառված խմբավորումը մանրամասներ է տրամադրում և՛ Հայաստանում օգտագործվող կրթական մակարդակներում բյուջետային ծախսերի ու այլ գործունեությունների վերաբերյալ և՛ GDN-R4D «Հանրային ծախսերի հաշվետվողականության բարելավման նպատակով ինստիտուտների զարգացման» ծրագրի համար պատրաստված՝ ԾԲՎ պահանջների փաստաթղթում ներկայացված ծրագրերի վերաբերյալ: Տվյալների մանրամասնեցման մակարդակը թույլ է տալիս հեշտությամբ խմբավորել նախապատրաստված տվյալները Հայաստանի կրթության կառուցվածքի, ինչպես նաև ԾԲՎ պահանջների փաստաթղթում ներկայացված ձևաչափերով: Հայաստանի կրթական համակարգի ներկա կառուցվածքը (կրթական մակարդակները և ծրագրերը) հիմնականում հիմնված է կրթական օրենսդրության վրա, ինչպիսին է օրինակ Միջնակարգ ընդհանուր կրթության մասին օրենքը, որը սահմանում է տարրական, միջնակարգ և ավագ դպրոցները՝ որպես ընդհանուր միջնակարգ կրթության մասեր:

Ծախսերի բաշխումներ

Պետական բյուջեի ծրագրերը ԾԲՎ իրականացման ձևաչափով վերախմբավորելու նպատակով կիրառվել են ծախսերի բաշխման հետևյալ տեսակները.

- 2006 և 2007թթ. համար ընդհանուր կրթության, հատուկ կրթության և շնորհալի երեխաների կրթության փաստացի ծախսերը վերաբաշխվել են տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների ծրագրերին՝ հիմնվելով համապատասխան

կրթական ենթաուղորտում տարրական, միջնակարգ և ավագ դասարանների աշակերտների փաստացի թվաքանակի վրա:

- Նշված ենթաուղորտների բոլոր օժանդակ ծառայությունների ծրագրերի փաստացի ծախսերը նույնպես վերաբաշխվել են տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներին՝ ըստ նույն սկզբունքի:
- 2008թ. իրականացված պետական բյուջեի համակարգի դեպի GFS 2001 անցումից հետո, միջնակարգ ընդհանուր կրթության ենթաուղորտի ծրագրերի ծախսերը վերախմբավորվեցին տարրական, հիմնական և միջնակարգ կրթության խմբերում (համարժեք են տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների ծրագրերին): Մակայն ընդհանուր կրթության, ինչպես նաև կրթության այլ մկարդակների բոլոր օժանդակ ծրագրերը դուրս բերվեցին իրենց համապատասխան մակարդակներից և համախմբվեցին “Կրթության օժանդակ ծառայություններ” առանձին մասում: ԾԲՎ իրականացման նպատակներից ելնելով, բոլոր ծրագրերը որոնք կարելի էր դասել կրթական մակարդակներից որևէ մեկին, վերաբաշխվեցին ԾԲՎ ձևաչափով համապատասխան ծրագրին: Միջնակարգ ընդհանուր կրթության օժանդակ ծրագրերի այն ծախսերը, որոնք առնչվում էին միջնակարգ ընդհանուր կրթության բոլոր երեք ենթաուղորտներին բաշխվեցին այդ ենթաուղորտներին՝ հիմնվելով սույն պարագրաֆի առաջին կետում նկարագրված սկզբունքի վրա:

Աշխատավարձին ուղղվող և այլ ծախսեր

Ինչպես ցույց է տրված ԾԲՎ ամփոփ աղյուսակ 4E-ում, պետական բյուջեի բոլոր ընթացիկ կրթական ծախսերի միայն 0.4%-են ներկայացված որպես աշխատավարձեր: Պատճառն այն է, որ բացառությամբ կրթության պետական կառավարման ծրագրերից, բոլոր ծրագրերը հիմնված են ծառայությունների մատուցման սկզբունքի վրա, երբ պետական ֆինանսավորումը տրամադրվում է կրթական ծառայությունների որոշակի ծավալների գնման կամ որոշակի ծրագրերի իրականացման համար տրամադրված դրամաշնորհների տեսքով, այլ ոչ թե՝ մուտքերի ուղղակի ֆինանսավորման տեսքով, ինչպիսիք են աշխատավարձերը: Միայն կրթության կառավարման ծառայություններն են ֆինանսավորվում տնտեսագիտական հողվածների բացված (մուտքային) սկզբունքով և ֆիքսում են պլանավորված և փաստացի աշխատավարձերը առանձին հողվածում: Ինչնիցե, ԾԲ վերլուծության նպատակների համար աշխատավարձի ծախսերը գնահատվել են կրթական հաստատությունների ծախսերում: Համաձայն գնահատականներին, ընթացիկ ծախսերի մեջ աշխատավարձի միջին ծախսերի տոկոսը կազմում է 82.7% (տես հավելված B-2):

Առողջապահություն

Սույն վերլուծության նպատակներից ելնելով այս ոլորտում առողջապահական ծրագրերը և միջոցառումները խմբավորված են հիմնական 6 քաղաքականությունների ուղղություններով⁴:

1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
2. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ
3. Հիվանդանոցային ծառայություններ
4. Հանրային առողջապահական ծառայություններ
5. Հարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ
6. Քաղաքականության մշակում և վարչարարություն

Ի հավելումն, առողջապահական ծրագրերը և միջոցառումները խմբավորվել են նաև ըստ ՁՀՑ-ի (GDN) առաջարկած ծրագրերի դասակարգման՝ երկրների միջև համեմատություններն ապահովելու նպատակով: Խմբավորումը կատարվել է հետևյալ կերպ.

| ՁՀՑ (GDN) ծրագրերի դասակարգում | ԱՆ մոտեցումով կատարված դասակարգում |
|---------------------------------------|--|
| Հիվանդանոց | 1. Հիվանդանոցային ծառայություններ 2. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ (Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ և գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ) |
| Առողջապահական կենտրոն /դիսպանսեր | Դիսպանսերների վերաբերյալ տվյալներ հասանելի չեն, քանի որ դրանք ներառված են եղել հիվանդանոցային և կանխարգելիչ ծառայություններում և հնարավոր չէր այդ ծառայություններից տվյալներն առանձնացնել |
| Կանխարգելիչ | 1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ 2. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ |
| Այլ առողջապահական | 1. Հանրային առողջապահական ծառայություններ 2. Պարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ |

⁴ Մանրամասնորեն ներկայացված է Ա-2 հավելվածում

| | |
|-----------------------------------|---|
| Նախարարական տարածքային կառավարում | և Քաղաքականության մշակում և վարչարարություն |
|-----------------------------------|---|

Քանի որ, “Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ” ծրագիրը հանդիսանում է ՁՀՑ “Հաստատությունների հզորացում հանրային ծախսերի հաշվետվականության բարելավման նպատակով” ծրագրի համար գլխավոր հետաքրքրություն ունեցող ծրագիր, ապա մենք առանձնացրել ենք համապատասխան միջոցառումները առողջության առաջնային պահպանման ծառայություններից և հիվանդանոցային ծառայություններից:

Աշխատավարձերի բաղադրիչը արտացոլված է (և սույն հաշվետվությունում դիտարկվում է) միայն “Քաղաքականության մշակում և վարչարարություն” ծրագրի մասով: Այլ ոլորտների նման, ծառայությունները մատուցողի մասով (օրինակ՝ հիվանդանոցների) աշխատավարձերն արտացոլված չեն բյուջետային համակարգում, քանի որ այդ ծառայությունները գնվում են պայմանագրային (մեկ դեպքի հաշվով) սկզբունքով: Մասնավորապես, առաջնային բուժօգնության ծառայությունները ֆինանսավորվում են ըստ յուրաքանչյուր շահառուի, իսկ հիվանդանոցային բուժօգնության ծառայությունները ֆինանսավորվում են ըստ յուրաքանչյուր դեպքի: Այս մոտեցումն արդյունք է 90-ականների սկզբում իրականացված բարեփոխումների, ինչի արդյունքում առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունները օգտագործում են մեկ տողով ֆինանսավորման համակարգ և ավելի ինքնուրույն են՝ հատկացված միջոցների օգտագործման վերաբերյալ գործառնական որոշումներ կայացնելիս: Ինչևէ, հիվանդանոցային և կանխարգելիչ (առողջության առաջնային պահպանման) ծառայությունների մասով աշխատավարձերի բաղադրիչները միջինում գնահատվում են համապատասխանաբար 40% և 70%:

Ջրային տնտեսության ոլորտ

Սույն հաշվետվությունը վերլուծության է ենթարկում ջրային ենթակառուցվածքների ոլորտի ընթացիկ և կապիտալ ծախսերը, ընդ որում վերլուծության մեջ չեն ներառվում ջրային ռեսուրսների կառավարման համակարգին առնչվող բնապահպանական հանգամանքները:

Սույն վերլուծությունը կատարելիս, ջրային ոլորտում իրականացվող ծրագրերը համախմբվեցին հետևյալ կերպ, որը համահունչ է այս ոլորտի քաղաքականության ուղղություններին:

1. Խմելու ջրի մատակարարում
2. Ջրահեռացում
3. Ոռոգում
4. Քաղաքականության մշակում և վարչարարություն

Այսպիսի խմբավորումը և վերլուծությունը հիմնված են 2006-2010թթ. ընթացքում իրականացված և նախատեսված ծրագրերի վրա:

Ծրագրերի ազդեցումը ծրագրային բյուջետավորման վերլուծությանը համապատասխանող մակարդակով իրականացնելու համար տարանջատվեցին ՀՀ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորված բոլոր միջոցառումները և ծրագրերը: Այդ գործում տեղեկատվության հիմնական աղբյուր էր հանդիսանում պետական բյուջեի մասին ՀՀ օրենքը՝ համապատասխան տարիների համար:

ՈԼՈՐՏԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված պատճառներով (որոնք ներկայացվել են Ներածություն բաժնում) բոլոր երեք ոլորտների ֆինանսավորման մակարդակները սահմանափակվում են պետական բյուջեով: ՏԲՄ բյուջեները չեն ֆինանսավորում ո՛չ կրթությունը, ո՛չ առողջապահությունը և ոչ էլ ջրային ոլորտի ծրագրերը⁵: Ավելին, սույն հաշվետվության նպատակներից էլնելով, ԱՍՏ-ի կողմից իրականացված՝ Օգուտների Բաշխման Վերլուծություն հետազոտությունը ներառել է յուրաքանչյուր ոլորտի 2008թ. ծախսերի մոտավոր գնահատական (կրթության ոլորտի ՏՏ ծախսերի տվյալների համար օգտագործվել են այլնտրանքային տվյալներ՝ Կրթության և գիտության նախարարության մոտավոր գնահատականներից): Այսպիսով, ԾԲՎ հաշվետվության աղյուսակ 5-ը (տես “ԾԲ պահանջներին համապատասխան աղյուսակներ” բաժինը) միավորում է տնային տնտեսությունների 2008թ. ծախսերի վերաբերյալ տվյալներ: Բոլոր այլ աղյուսակները չեն պարունակում ՏՏ ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ բոլոր տարիների համար լիարժեք և վստահելի տվյալների բացակայության պատճառով:

Կրթություն

Պետական կրթական ծրագրերի ֆինանսավորման գլխավոր աղբյուրը կենտրոնական կառավարության բյուջեն է: Որոշ ծրագրեր ներառում են նաև ֆինանսավորում դոնորների

⁵ Որոշ ոչ էական բացառություններ տեղի են ունենում մասնավոր նվիրատու կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց կողմից ուղղակի աջակցության պարագայում

կողմից, ինչպիսիք են Համաշխարհային Բանկը, Եվրոպական Հանձնաժողովը, Լինսի Հիմնադրամը և այլոք: ԾԲՎ աղյուսակները ներկայացնում են բոլոր ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների մանրամասն բացվածք:

Առողջապահություն

Առողջապահական ծրագրերի ֆինանսավորման հանրային միակ աղբյուրը պետական բյուջեն է: Ինչպես և կրթական ոլորտում, տեղական ինքնակառավարման մարմինները չունեն առողջապահական ծրագրերի ծախսեր:

Ջրային տնտեսության ոլորտ

ԾԲՎ աղյուսակներում բերված՝ ոլորտի ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներն երկուսն են՝

- 1. Պետական բյուջե
- 2. Դոնորների ֆինանսավորում⁶

Ֆինանսավորման միայն երկու աղբյուրների առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ջրային ենթակառուցվածքներն հանդիսանում են պետական սեփականություն: 2001թ.-ից սկսած կիրառվում է ջրային համակարգերի օգտագործման իրավունքով տրամադրման ձևը, ինչպես օրինակ՝ Երևանի ջրամատակարար ընկերության դեպքում, երբ Երևանի ջրամատակարարման ողջ ենթակառուցվածքը մրցույթով տրամադրվեց վարձակալության:

Ենթադրաբար, տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես կարող են ջրային ոլորտի ծրագրերի ֆինանսավորման աղբյուր հանդիսանալ: Կան մոտ 600 ՏԻՄ-եր որոնք միացված չեն և/կամ չունեն կենտրոնացված ջրամատակարարման համակարգին: Այս ՏԻՄ-երն օգտագործում են ջրի բնական աղբյուրները: Որոշ այլ դեպքերում, կան ՏԻՄ-եր, որոնք ունեն խորհրդային ժամանակաշրջանից մնացած տեղական ջրային ենթակառուցվածքներ: Ինչևէ, նման դեպքերում ՏԻՄ-երը պատշաճ կերպով չեն

| |
|---|
| Օրինակ, Արմավիր քաղաքի ջրամատակարարման ցանցը գտնվում էր համայնքի սեփականությունում: Սակայն համայնքը տարիներով դրանում ոչ մի գումար չէր ներդնում: Արդյունքում, Գերմանական զարգացման բանկի աջակցությամբ և կառավարության համակարգման միջոցով իրականացվեց Արմավիր համայնքի ջրամատակարարման ծրագիրը, որով ստեղծվեց “Նոր Ակունք” ՓԲԸ-ն: |
|---|

⁶ Նվիրատու կազմակերպությունների հատկացումները նույնպես ուղղվում են պետական բյուջեի խողովակներով, սակայն, սույն հաշվետվության նպատակահարմարության համար այն տարանջատվել է

պահպանում ենթակառուցվածքները և դրանցում ներդրումներ չեն կատարում՝ ՏԻՄ-ի փոքր չափերի պատճառով: Այսպիսով, ջրային ոլորտի բոլոր ներդրումները և ծախսերը փաստացի ֆինանսավորվում են միայն մեկ մակարդակից:

Ոռոգման համակարգը ևս ամբողջությամբ կախված է պետական բյուջեի և դոնոր աղբյուրների կողմից իրականացվող ֆինանսավորումից: Այստեղ թեև սկսած 2002թ.-ից կատարվեցին լուրջ բարեփոխումներ՝ (նոր ջրային օրենսգրքի և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների» մասին օրենքի ընդունումը; անցում առևտրային հարաբերություններին, ջրօգտագործողների ընկերությունների ստեղծում - ՋՕԸ), սակայն կառավարությունը դեռևս սուբսիդավորում է ՋՕԸ-ներին՝ ցածր գների ռազմավարությունը պահպանելու նպատակով՝ տեղական սննդամթերքների մատակարարման ռազմավարական խնդիրների և տեղական արտադրության բարձր ինքնարժեքի պատճառով:

Այսպիսով, ստորև ներկայացված է վերը նշված տեղեկատվության ամփոփ աղյուսակը.

| | Կրթություն | Առողջապահություն | Ջրային տնտեսություն |
|----------------------------------|--|--|--|
| Մակարդակ 1: պետական բյուջե | Կրթության և գիտության նախարարություն, մարզպետարաններ, այլ գերատեսչություններ | Առողջապահության նախարարություն, մարզպետարաններ | Ֆինանսների նախարարություն, ՏԿՆ Ջրային տնտեսության պետական կոմիտե |
| Մակարդակ 2: Տարածքային բյուջեներ | Կիրառելի չէ Հայաստանում ⁷ | Կիրառելի չէ | Կիրառելի չէ |
| Մակարդակ 3: ՏԻՄ բյուջեներ | ոչ ⁸ | ոչ | ոչ |

⁷ Քանի որ մարզպետարանների բյուջեները կազմում են ՀՀ պետական բյուջեի մաս

⁸ Միայն նախադպրոցական կրթություն (մանկապարտեզներ), որոնք սույն վերլուծության օբյեկտ չեն հանդիսանում

ԾԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Սույն բաժնում ներկայացված աղյուսակներում տվյալները բերված են ՀՀ դրամով և ստորև ներկայացված է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը՝ ըստ տարիների:

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (կանխ.) | 2010 (կանխ.) |
|--|-------|-------|-------|-----------------|-----------------|
| ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեք ⁹ | 416.0 | 342.1 | 306.0 | 303.69 | 386.41 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների – Կրթություն (1E)

| Կրթություն | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ.) |
|---|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Տարրական դպրոց | 18,051,920.8 | 22,382,146.8 | 23,989,314.8 | 29,139,323.8 | 22,708,287.3 |
| Ընթացիկ | 13,410,087.8 | 15,931,044.5 | 17,106,666.4 | 22,223,409.0 | 22,127,192.4 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 13,410,087.8 | 15,931,044.5 | 17,106,666.4 | 22,223,409.0 | 22,127,192.4 |
| Կապիտալ | 4,641,833.1 | 6,451,102.3 | 6,882,648.4 | 6,915,914.8 | 581,095.0 |
| Ներքին | 2,084,200.2 | 4,441,856.5 | 6,470,544.4 | 6,719,921.8 | 123,050.4 |
| Դոնոր | 2,557,632.9 | 2,009,245.8 | 412,104.0 | 195,993.1 | 458,044.6 |
| Միջին դպրոց | 33,211,459.2 | 39,046,286.5 | 41,747,362.6 | 53,838,104.9 | 37,704,566.8 |
| Ընթացիկ | 24,443,552.3 | 28,071,706.0 | 31,430,062.6 | 41,505,418.2 | 36,646,143.8 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 24,443,552.3 | 28,071,706.0 | 31,430,062.6 | 41,505,418.2 | 36,646,143.8 |
| Կապիտալ | 8,767,906.9 | 10,974,580.5 | 10,317,300.1 | 12,332,686.7 | 1,058,423.0 |
| Ներքին | 3,936,822.6 | 7,314,882.8 | 9,566,682.0 | 11,975,699.3 | 224,127.6 |
| Դոնոր | 4,831,084.3 | 3,659,697.7 | 750,618.1 | 356,987.4 | 834,295.4 |
| Ավագ դպրոց | 14,331,816.3 | 16,083,180.0 | 20,580,923.7 | 24,448,090.5 | 16,388,221.1 |
| Ընթացիկ | 10,549,582.0 | 11,564,235.1 | 12,595,781.4 | 16,758,517.5 | 15,792,799.9 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 10,549,582.0 | 11,564,235.1 | 12,595,781.4 | 16,758,517.5 | 15,792,799.9 |
| Կապիտալ | 3,782,234.4 | 4,518,944.9 | 7,985,142.3 | 7,689,572.9 | 595,421.2 |
| Ներքին | 1,698,237.2 | 3,012,010.6 | 6,019,248.5 | 7,542,578.1 | 251,887.8 |
| Դոնոր | 2,083,997.2 | 1,506,934.3 | 1,965,893.8 | 146,994.8 | 343,533.4 |
| Նախնական մասնագիտական կրթություն | 1,014,485.6 | 1,292,177.1 | 2,874,658.6 | 2,096,833.0 | 2,810,037.6 |
| Ընթացիկ | 1,014,485.6 | 1,282,477.1 | 1,540,613.4 | 2,096,833.0 | 1,994,037.6 |

⁹ աղբյուր: “Armenia Economic Report 2009: From Crisis toward New Development”, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

| | | | | | |
|--|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 1,014,485.6 | 1,282,477.1 | 1,540,613.4 | 2,096,833.0 | 1,994,037.6 |
| Կապիտալ | 0.0 | 9,700.0 | 1,334,045.2 | 0.0 | 816,000.0 |
| Ներքին | 0.0 | 9,700.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 1,334,045.2 | 0.0 | 816,000.0 |
| Միջին մասնագիտական կրթություն | 1,827,555.9 | 2,216,663.3 | 3,876,509.4 | 3,539,785.8 | 3,869,781.4 |
| Ընթացիկ | 1,756,555.9 | 2,128,185.8 | 2,443,573.1 | 3,163,815.8 | 3,053,781.4 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 1,756,555.9 | 2,128,185.8 | 2,443,573.1 | 3,163,815.8 | 3,053,781.4 |
| Կապիտալ | 71,000.0 | 88,477.5 | 1,432,936.3 | 375,970.0 | 816,000.0 |
| Ներքին | 71,000.0 | 88,477.5 | 98,891.1 | 375,970.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 1,334,045.2 | 0.0 | 816,000.0 |
| Բարձրագույն մասնագիտական կրթություն | 4,923,438.2 | 5,175,607.2 | 6,277,105.4 | 7,418,550.8 | 7,226,695.8 |
| Ընթացիկ | 4,626,438.2 | 5,048,113.5 | 6,244,667.2 | 7,355,436.8 | 7,226,695.8 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 4,626,438.2 | 5,048,113.5 | 6,244,667.2 | 7,355,436.8 | 7,226,695.8 |
| Կապիտալ | 297,000.0 | 127,493.8 | 32,438.2 | 63,114.0 | 0.0 |
| Ներքին | 297,000.0 | 127,493.8 | 32,438.2 | 63,114.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Հետբուհական մասնագիտական կրթություն | 378,971.1 | 322,798.9 | 561,386.9 | 600,257.8 | 651,717.4 |
| Ընթացիկ | 378,971.1 | 316,055.2 | 561,386.9 | 600,257.8 | 651,717.4 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 378,971.1 | 316,055.2 | 561,386.9 | 600,257.8 | 651,717.4 |
| Կապիտալ | 0.0 | 6,743.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Ներքին | 0.0 | 6,743.6 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 2,477,118.5 | 2,037,266.5 | 2,146,181.3 | 3,491,592.4 | 2,313,310.6 |
| Ընթացիկ | 999,368.5 | 1,220,526.8 | 1,685,687.3 | 2,394,152.4 | 2,313,310.6 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 999,368.5 | 1,220,526.8 | 1,685,687.3 | 2,394,152.4 | 2,313,310.6 |
| Կապիտալ | 1,477,750.0 | 816,739.7 | 460,494.0 | 1,097,440.0 | 0.0 |
| Ներքին | 1,477,750.0 | 816,739.7 | 460,494.0 | 1,097,440.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Լրացուցիչ | 0.0 | 0.0 | 771,963.3 | 1,274,935.7 | 952,360.0 |

| | | | | | |
|---|---------------------|---------------------|----------------------|----------------------|---------------------|
| կրթություն | | | | | |
| Ընթացիկ | 0.0 | 0.0 | 769,153.3 | 1,212,189.2 | 952,360.0 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 0.0 | 0.0 | 769,153.3 | 1,212,189.2 | 952,360.0 |
| Կապիտալ | 0.0 | 0.0 | 2,810.0 | 62,746.5 | 0.0 |
| Ներքին | 0.0 | 0.0 | 2,810.0 | 62,746.5 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 646,869.3 | 662,253.0 | 759,140.0 | 1,102,348.5 | 1,045,473.7 |
| Ընթացիկ | 605,416.3 | 586,359.6 | 736,285.1 | 998,664.3 | 1,045,473.7 |
| Աշխատավարձ | 295,734.4 | 306,691.8 | 385,398.2 | 464,959.1 | 479,880.2 |
| Այլ | 309,681.9 | 279,667.8 | 350,886.9 | 533,705.2 | 565,593.5 |
| Կապիտալ | 41,453.0 | 75,893.4 | 22,854.9 | 103,684.2 | 0.0 |
| Ներքին | 41,453.0 | 75,893.4 | 22,854.9 | 15,000.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 88,684.2 | 0.0 |
| Ընդամենը ծախսեր | 76,863,635.0 | 89,218,379.2 | 103,584,546.0 | 126,949,823.0 | 95,670,451.8 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների – Առողջապահություն (1H)

| Առողջապահություն, ՀՀ դրամ, 000 | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|
| Արտահիվանդանոցային ծառայություններ/ Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | 13,336,353 | 15,606,114 | 18,280,513 | 24,106,798 | 19,861,476 |
| Ընթացիկ | 13,336,353 | 15,606,114 | 18,280,513 | 24,106,798 | 19,861,476 |
| Աշխատավարձ | - | - | - | - | - |
| Այլ | 13,336,353 | 15,606,114 | 18,280,513 | 24,106,798 | 19,861,476 |
| Կապիտալ | - | - | - | - | - |
| Ներքին | - | - | - | - | - |
| Դոնոր | - | - | - | - | - |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 3,015,199 | 3,266,005 | 5,108,887 | 8,167,484 | 7,228,845 |
| Ընթացիկ | 3,015,199 | 3,266,005 | 5,108,887 | 8,167,484 | 7,228,845 |
| Աշխատավարձ | - | - | - | - | - |
| Այլ | 3,015,199 | 3,266,005 | 5,108,887 | 8,167,484 | 7,228,845 |
| Կապիտալ | - | - | - | - | - |
| Ներքին | - | - | - | - | - |

| | | | | | |
|---|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|
| Դոնոր | - | - | - | - | - |
| Հիվանդանոցային ծառայություններ | 12,604,188 | 13,941,868 | 14,889,779 | 16,796,179 | 15,141,589 |
| Ընթացիկ | 12,109,188 | 13,151,868 | 14,889,779 | 16,796,179 | 15,141,589 |
| Աշխատավարձ | - | - | - | - | - |
| Այլ | 12,109,188 | 13,151,868 | 14,889,779 | 16,796,179 | 15,141,589 |
| Կապիտալ | 495,000 | 790,000 | - | - | - |
| Ներքին | 495,000 | 790,000 | - | - | - |
| Դոնոր | - | - | - | - | - |
| Հանրային առողջապահական ծառայություններ | 1,934,555 | 2,921,995 | 2,829,200 | 3,038,393 | 2,796,361 |
| Ընթացիկ | 1,909,555 | 2,224,738 | 2,829,200 | 3,038,393 | 2,796,361 |
| Աշխատավարձ | - | - | - | - | - |
| Այլ | 1,909,555 | 2,224,738 | 2,829,200 | 3,038,393 | 2,796,361 |
| Կապիտալ | 25,000 | 697,257 | - | - | - |
| Ներքին | 25,000 | 697,257 | - | - | - |
| Դոնոր | - | - | - | - | - |
| Հարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ | 7,789,352 | 10,073,645 | 12,454,542 | 12,835,470 | 9,065,701 |
| Ընթացիկ | 2,819,313 | 4,388,214 | 5,007,286 | 6,873,252 | 5,500,109 |
| Աշխատավարձ | - | - | - | - | - |
| Այլ | 2,819,313 | 4,388,214 | 5,007,286 | 6,873,252 | 5,500,109 |
| Կապիտալ | 4,970,040 | 5,685,431 | 7,447,256 | 5,962,218 | 3,565,592 |
| Ներքին | 4,970,040 | 5,685,431 | 7,447,256 | 5,962,218 | 3,565,592 |
| Դոնոր | - | - | - | - | - |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 730,537 | 844,105 | 910,534 | 1,143,287 | 1,080,977 |
| Ընթացիկ | 730,537 | 838,746 | 910,534 | 1,143,287 | 1,080,977 |
| Աշխատավարձ | 466,623 | 624,510 | 817,801 | 1,039,745 | 996,236 |
| Այլ | 263,914 | 214,237 | 92,734 | 103,542 | 84,742 |
| Կապիտալ | - | 5,359 | - | - | - |
| Ներքին | - | 5,359 | - | - | - |
| Դոնոր | - | - | - | - | - |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների – Ջուր (1W)

| Ջուր, ՀՀ դրամ ,000 | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|---------------------------------|------------------|------------------|------------------|-------------------|-------------------|
| Ջրամատակարարման համակարգ | 6708356.1 | 5759138.1 | 7469630.0 | 13413820.5 | 22915975.9 |

| | | | | | |
|---|-------------------|------------------|------------------|-------------------|-------------------|
| Ընթացիկ | 3494723.2 | 2491258.9 | 2641732.8 | 2703139.8 | 3139861.5 |
| Աշխատավարձ | 1002862.3 | 669813.3 | 590240.8 | 25529.2 | 5894.2 |
| Այլ | 2491860.9 | 1821445.6 | 2051492.0 | 2677610.6 | 3133967.3 |
| Կապիտալ | 3213632.9 | 3267879.2 | 4827897.2 | 10710680.7 | 19776114.4 |
| Ներքին | 425450.4 | 482409.1 | 725550.2 | 4056684.9 | 4967766.3 |
| Դոնոր | 2788182.5 | 2785470.1 | 4102347.0 | 6653995.8 | 14808348.1 |
| Ջրահեռացման համակարգ | 0.0 | 223115.2 | 174801.8 | 3627384.8 | 3002376.9 |
| Ընթացիկ | 0.0 | 79468.2 | 0.0 | 209461.5 | 324188.9 |
| Աշխատավարձ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Այլ | 0.0 | 79468.2 | 0.0 | 209461.5 | 324188.9 |
| Կապիտալ | 0.0 | 143647.0 | 174801.8 | 3417923.3 | 2678188.0 |
| Ներքին | 0.0 | 0.0 | 31154.8 | 580987.2 | 179458.1 |
| Դոնոր | 0.0 | 143647.0 | 143647.0 | 2836936.1 | 2498729.9 |
| Ոռոգման համակարգ | 11177385.7 | 9515139.8 | 9529956.8 | 10391438.8 | 17324384.9 |
| Ընթացիկ | 4743372.7 | 6059797.3 | 5782903.9 | 6161077.0 | 6638589.1 |
| Աշխատավարձ | 195542.9 | 120892.4 | 0.0 | 35531.7 | 518030.7 |
| Այլ | 4547829.8 | 5938904.9 | 5782903.9 | 6125545.3 | 6120558.4 |
| Կապիտալ | 6434013.0 | 3455342.4 | 3747052.9 | 4230361.8 | 10685795.8 |
| Ներքին | 1199510.6 | 1448543.4 | 2153314.3 | 3546874.0 | 5114689.4 |
| Դոնոր | 5234502.4 | 2006799.0 | 1593738.6 | 683487.8 | 5571106.4 |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 1686136.5 | 419896.0 | 1901669.3 | 152209.7 | 138749.7 |
| Ընթացիկ | 1447326.5 | 417546.0 | 597684.3 | 151109.7 | 138749.7 |
| Աշխատավարձ | 67143.6 | 83501.9 | 100171.9 | 115737.1 | 115691.9 |
| Այլ | 1380182.9 | 334044.1 | 497512.4 | 35372.6 | 23057.8 |
| Կապիտալ | 238810.0 | 2350.0 | 1303985.0 | 1100.0 | 0.0 |
| Ներքին | 238810.0 | 2350.0 | 1303985.0 | 1100.0 | 0.0 |
| Դոնոր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների, (%) – Կրթություն (2E)

| Կրթություն | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|-----------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Տարրական դպրոց | 18,051,920.8 | 22,382,146.8 | 23,989,314.8 | 29,139,323.8 | 22,708,287.3 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 74.3% | 71.2% | 71.3% | 76.3% | 97.4% |
| Կապիտալ | 25.7% | 28.8% | 28.7% | 23.7% | 2.6% |
| Ընթացիկի % | | | | | |

| | | | | | |
|--|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Միջին դպրոց | 33,211,459.2 | 39,046,286.5 | 41,747,362.6 | 53,838,104.9 | 37,704,566.8 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 73.6% | 71.9% | 75.3% | 77.1% | 97.2% |
| Կապիտալ | 26.4% | 28.1% | 24.7% | 22.9% | 2.8% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Ավագ դպրոց | 14,331,816.3 | 16,083,180.0 | 20,580,923.7 | 24,448,090.5 | 16,388,221.1 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 73.6% | 71.9% | 61.2% | 68.5% | 96.4% |
| Կապիտալ | 26.4% | 28.1% | 38.8% | 31.5% | 3.6% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Նախնական մասնագիտական կրթություն | 1,014,485.6 | 1,292,177.1 | 2,874,658.6 | 2,096,833.0 | 2,810,037.6 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 100.0% | 99.2% | 53.6% | 100.0% | 71.0% |
| Կապիտալ | 0.0% | 0.8% | 46.4% | 0.0% | 29.0% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Միջին մասնագիտական կրթություն | 1,827,555.9 | 2,216,663.3 | 3,876,509.4 | 3,539,785.8 | 3,869,781.4 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 96.1% | 96.0% | 63.0% | 89.4% | 78.9% |
| Կապիտալ | 3.9% | 4.0% | 37.0% | 10.6% | 21.1% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Բարձրագույն մասնագիտական կրթություն | 4,923,438.2 | 5,175,607.2 | 6,277,105.4 | 7,418,550.8 | 7,226,695.8 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 94.0% | 97.5% | 99.5% | 99.1% | 100.0% |
| Կապիտալ | 6.0% | 2.5% | 0.5% | 0.9% | 0.0% |
| Ընթացիկի % | | | | | |

| | | | | | |
|---|--------------------|--------------------|--------------------|--------------------|--------------------|
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Հետբուհական մասնագիտական կրթություն | 378,971.1 | 322,798.9 | 561,386.9 | 600,257.8 | 651,717.4 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 100.0% | 97.9% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Կապիտալ | 0.0% | 2.1% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Արտադարձական դաստիարակություն | 2,477,118.5 | 2,037,266.5 | 2,146,181.3 | 3,491,592.4 | 2,313,310.6 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 40.3% | 59.9% | 78.5% | 68.6% | 100.0% |
| Կապիտալ | 59.7% | 40.1% | 21.5% | 31.4% | 0.0% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% | 100.0% |
| Լրացուցիչ կրթություն | 0.0 | 0.0 | 771,963.3 | 1,274,935.7 | 952,360.0 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | | | 99.6% | 95.1% | 100.0% |
| Կապիտալ | | | 0.4% | 4.9% | 0.0% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | | | 0.0% | 0.0% | 0.0% |
| Այլ | | | 100.0% | 100.0% | 100.0% |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 646,869.3 | 662,253.0 | 759,140.0 | 1,102,348.5 | 1,045,473.7 |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 93.6% | 88.5% | 97.0% | 90.6% | 100.0% |
| Կապիտալ | 6.4% | 11.5% | 3.0% | 9.4% | 0.0% |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 48.8% | 52.3% | 52.3% | 46.6% | 45.9% |
| Այլ | 51.2% | 47.7% | 47.7% | 53.4% | 54.1% |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների , (%) – Առողջապահություն (2H)

| Առողջապահություն | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|------------------|------|------|------|------------------|----------------|
|------------------|------|------|------|------------------|----------------|

| Արտահիվանդանոցային ծառայություններ/ Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ | | | | | |
|--|------|------|------|------|------|
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Կապիտալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Կապիտալ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Հիվանդանոցային ծառայություններ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 96 | 94.3 | 100 | 100 | 100 |
| Կապիտալ | 4 | 5.7 | 0 | 0 | 0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Հանրային առողջապահական ծառայություններ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 98.7 | 76.1 | 100 | 100 | 100 |
| Կապիտալ | 1.3 | 23.9 | 0 | 0 | 0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Հարբշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 36.2 | 43.6 | 40.2 | 53.6 | 60.7 |
| Կապիտալ | 63.8 | 56.4 | 59.8 | 46.4 | 39.3 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Այլ | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| Քաղաքականության մշակում և կառավարում | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 100 | 99.4 | 100 | 100 | 100 |
| Կապիտալ | | 0.6 | | | |
| Ընթացիկի % | | | | | |

| | | | | | |
|------------|------|----|------|------|------|
| Աշխատավարձ | 63.9 | 74 | 89.9 | 90.9 | 92.2 |
| Այլ | 36.1 | 26 | 10.1 | 9.1 | 7.8 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ մակարդակների, (%) – Ջուր (2W)

| Ջուր, հազ. ՀՀ դրամ | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|---|------|------|-------|------------------|----------------|
| Ջրամատակարարման համակարգ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 52.1 | 43.3 | 35.4 | 20.2 | 13.7 |
| Կապիտալ | 47.9 | 56.7 | 64.6 | 79.8 | 86.3 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 28.7 | 26.9 | 22.3 | 0.9 | 0.2 |
| Այլ | 71.3 | 73.1 | 77.7 | 99.1 | 99.8 |
| Ջրահեռացման համակարգ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | - | - | 0 | 5.8 | 10.8 |
| Կապիտալ | - | - | 100 | 94.2 | 89.2 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | - | - | - | 0 | 0 |
| Այլ | - | - | - | 100 | 100 |
| Ոռոգման համակարգ | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 42.4 | 63.7 | 60.7 | 59.3 | 38.3 |
| Կապիտալ | 57.6 | 36.3 | 39.3 | 40.7 | 61.7 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 4.1 | 2.0 | 0.0 | 0.6 | 7.8 |
| Այլ | 95.9 | 98.0 | 100.0 | 99.4 | 92.2 |
| Քաղաքականության մշակում և կառավարում | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 85.8 | 99.4 | 31.4 | 99.3 | 100.0 |
| Կապիտալ | 14.2 | 0.6 | 68.6 | 0.7 | 0.0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 4.6 | 20.0 | 16.8 | 76.6 | 83.4 |
| Այլ | 95.4 | 80.0 | 83.2 | 23.4 | 16.6 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների, – Կրթություն (3E)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--|------|------|------|---------------|----------------|
|--|------|------|------|---------------|----------------|

| | | | | | |
|----------------------------------|---------------------|---------------------|----------------------|----------------------|---------------------|
| Ընդամենը կրթության ծախսեր | 76,863,635.0 | 89,218,379.2 | 103,584,546.0 | 126,949,823.0 | 95,670,451.8 |
| Ընթացիկ | 57,784,457.6 | 66,148,703.6 | 75,113,876.6 | 98,308,693.9 | 91,803,512.6 |
| Աշխատավարձ | 295,734.4 | 306,691.8 | 385,398.2 | 464,959.1 | 479,880.2 |
| Այլ | 57,488,723.2 | 65,842,011.8 | 74,728,478.4 | 97,843,734.8 | 91,323,632.4 |
| Կապիտալ | 19,079,177.4 | 23,069,675.6 | 28,470,669.4 | 28,641,129.1 | 3,866,939.2 |
| Ներքին | 9,606,463.0 | 15,893,797.8 | 22,673,963.1 | 27,852,469.7 | 599,065.8 |
| Դոնոր | 9,472,714.4 | 7,175,877.8 | 5,796,706.3 | 788,659.4 | 3,267,873.4 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների, – Առողջապահություն (3H)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--|-------------------|-------------------|-------------------|-------------------|-------------------|
| Ընդամենը առողջապահության ծախսեր | 39,410,183 | 46,653,731 | 54,473,456 | 66,087,610 | 55,133,420 |
| Ընթացիկ | 33,920,154 | 39,481,044 | 47,026,200 | 60,125,393 | 51,567,828 |
| Աշխատավարձ | 466,623 | 624,510 | 817,801 | 1,039,745 | 996,236 |
| Այլ | 33,453,531 | 38,856,534 | 46,208,399 | 59,085,648 | 50,571,592 |
| Կապիտալ | 5,490,030 | 7,172,687 | 7,447,256 | 5,962,218 | 3,565,592 |
| Ներքին | 5,490,030 | 7,172,687 | 7,447,256 | 5,962,218 | 3,565,592 |
| Դոնոր | - | - | - | - | - |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների – Ջուր (3W)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--------------------------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|
| Ընդամենը ջրային ոլորտի ծախսեր | 19,571,878.3 | 15,917,289.1 | 19,076,057.9 | 27,584,853.8 | 43,381,487.4 |
| Ընթացիկ | 9,685,422.4 | 9,048,070.5 | 9,022,321.0 | 9,224,788.0 | 10,241,389.2 |
| Աշխատավարձ | 1,265,548.8 | 874,207.6 | 690,412.7 | 176,798.0 | 639,616.8 |
| Այլ | 8,419,873.6 | 8,173,862.8 | 8,331,908.3 | 9,047,990.0 | 9,601,772.4 |
| Կապիտալ | 9,886,455.9 | 6,869,218.6 | 10,053,736.9 | 18,360,065.8 | 33,140,098.2 |
| Ներքին | 1,863,771.0 | 1,933,302.5 | 4,214,004.3 | 8,185,646.1 | 10,261,913.8 |
| Դոնոր | 8,022,684.9 | 4,935,916.1 | 5,839,732.6 | 10,174,419.7 | 22,878,184.4 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների (%) – Կրթություն (4E)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--|------|------|------|------------------|----------------|
|--|------|------|------|------------------|----------------|

| Ընդամենը կրթության ծախսեր | | | | | |
|----------------------------------|------|------|------|------|------|
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 75.2 | 74.1 | 72.5 | 77.4 | 96.0 |
| Կապիտալ | 24.8 | 25.9 | 27.5 | 22.6 | 4.0 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 | 0.5 |
| Այլ | 99.5 | 99.5 | 99.5 | 99.5 | 99.5 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների (%) – Առողջապահություն (4H)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--|------|------|------|------------------|----------------|
| Ընդամենը առողջապահության ծախսեր | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 86.1 | 84.6 | 95.7 | 99.1 | 93.5 |
| Կապիտալ | 13.9 | 15.4 | 13.7 | 9 | 6.5 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 1.4 | 1.6 | 1.7 | 1.7 | 1.9 |
| Այլ | 98.6 | 98.5 | 98.3 | 98.3 | 99.1 |

Ընթացիկ և կապիտալ ծախսեր ըստ ոլորտների (%) – Ջուր (4W)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--------------------------------------|------|------|------|------------------|----------------|
| Ընդամենը ջրային ոլորտի ծախսեր | | | | | |
| Ընդամենի % | | | | | |
| Ընթացիկ | 49.5 | 56.8 | 47.3 | 33.4 | 23.6 |
| Կապիտալ | 50.5 | 43.2 | 52.7 | 66.6 | 76.4 |
| Ընթացիկի % | | | | | |
| Աշխատավարձ | 13.1 | 9.7 | 7.7 | 1.9 | 6.2 |
| Այլ | 86.9 | 90.3 | 92.3 | 98.1 | 93.8 |

Ֆինանսավորման աղբյուրները ըստ ոլորտների, 2008 (5)

| | Գումար | ՀՆԱ % | Ոլորտի ծախսերի % |
|----------------------|---------------|-------|------------------|
| Կրթություն | | | |
| Ընդամենը | 172,860,446.0 | 4.74% | 100% |
| Կառավարություն | 96,952,041.5 | 2.66% | 56.09% |
| Ազգային/կենտրոնական | 96,952,041.5 | 2.66% | 56.09% |
| Շրջանային/Տարածքային | 0.0 | 0.00% | 0.00% |

| | | | |
|-----------------------------------|--------------|-------|--------|
| Տեղական (ՏԻՄ) | 0.0 | 0.00% | 0.00% |
| Տնային տնտեսություն | 69,275,900.0 | 1.90% | 40.08% |
| Դոնոր/Արտաքին աջակցություն | 6,632,504.5 | 0.18% | 3.84% |
| Առողջապահություն | | | |
| Ընդամենը | 85,047,983.3 | 1.5% | 100% |
| Կառավարություն | 54,473,456 | 1.5% | 64.1% |
| Ազգային/Կենտրոնական | 54,473,456 | 1.5% | 64.1% |
| Շրջանային/Տարածքային | 0 | 0 | 0 |
| Տեղական (ՏԻՄ) | 0 | 0 | 0 |
| Տնային տնտեսություն ¹⁰ | 30,574,527 | 0.8% | 35.9% |
| Դոնոր/Արտաքին աջակցություն | 0 | 0 | 0 |
| Ջուր | | | |
| Ընդամենը | 43,428,151.9 | 1.2% | 100% |
| Կառավարություն | 13,236,325.3 | 0.4% | 30.5% |
| Ազգային/Կենտրոնական | 13,236,325.3 | 0.4% | 30.5% |
| Շրջանային/Տարածքային | 0 | 0 | 0 |
| Տեղական (ՏԻՄ) | 0 | 0 | 0 |
| Տնային տնտեսություն | 24,352,094 | 0.7% | 56.1% |
| Դոնոր/Արտաքին աջակցություն | 5,839,732.6 | 0.2% | 13.4% |

Պետության վերաբերյալ ընդհանուր տվյալներ (6)

| | 2006 | 2007 | 2008 | 2009 (բյուջե) | 2010 (կանխ) |
|--------|---------------|---------------|---------------|-----------------------------|---------------|
| ՀՆԱ | 2,656,189,800 | 3,149,283,400 | 3,646,111,300 | 4,169,300,000 ¹¹ | 3,214,600,000 |
| Բնակչ. | 3,222,700 | 3,230,100 | 3,238,400 | 3,245,836 | 3,253,289 |

ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթություն

Ստորև ներկայացված է ԾԲՎ աղյուսակների մշակման նպատակով օգտագործված ենթաաղյուսակների ցուցակը:

1. Միջնակարգ ընդհանուր կրթությանն առնչվող ծախսերի՝ տարրական, միջին և ավագ դպրոցների ծրագրերին բաշխման նպատակով հաշվարկվել և կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ հիմնվելով Մերթոդաբանություն գլխի Կրթություն բաժնի

¹⁰ Հաշվարկները արված են ՕԲՎ համար AST կողմից իրականացրած հետազոտության արդյունքների հիման վրա

¹¹ Առ 2009 նոյեմբերի. ՀՆԱ կանխատեսումները զգալիորեն ճշգրտվել են տնտեսական ճգնաժամի հետևանքները հաշվի առնելով: Ճշգրտված կանխատեսումները կազմում են 3,116,000,000

Ծախսերի բաշխում պարագրաֆի առաջին կետում նկարագրված սկզբունքի վրա (տես վերը).

- a. 2006թ. համար - 27%, 51% և 22%, համապատասխանաբար՝ տարրական, միջին և ավագ դպրոցների ծրագրերի համար;
 - b. 2007 – 2010թթ. համար – համապատասխանաբար 28%, 51% և 21%:
2. 2006 և 2007թթ. համար, երբ պետական բյուջեով տարանջատված չէին բարձրագույն և հետբուհական կրթությունների ծախսերը, հաշվարկվել և կիրառվել են երկու ծրագրերին առնչվող ծախսերի հատուկ ցուցանիշներ՝ համապատասխանաբար 92% և 8%՝ հիմնված նույն ծրագրերի 2008-2010թթ. տվյալների վրա:
3. ԾԲՎ “Ընդհանուր երկրի տվյալներ (6)” ձևում 2009 և 2010թթ. բնակչությունը հաշվարկվել է հիմնվելով 2006-2008թթ. փաստացի միջին աճի տոկոսի վրա (մոտ 0.23% տարեկան):

Առողջապահություն

Ոլորտում իրականացվող կապիտալ ներդրումները հիմնականում կատարվում են Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում (Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների, ընտանեկան բժիշկների գրասենյակների շինարարություն և վերանորոգում, բժշկական սարքավորումների, տեխնոլոգիաների և ավտոմեքենաների ձեռքբերում և այլն): Ծրագիրը ֆինանսավորել է տարբեր նպատակների համար ոչ-ֆինանսական ակտիվների շինարարությունը և ձեռքբերումը (այդ թվում՝ առաջնային բուժօգնության հաստատություններ, ընտանեկան բժիշկների գրասենյակներ, հիվանդանոցներ): Այնուամենայնիվ, հնարավոր չի եղել ըստ տարիների և ծրագրերի ձեռք բերել տարաբաժանված ծախսերի ցուցանիշները (օրինակ՝ ըստ առաջնային առողջապահության և հիվանդանոցային ծրագրերի): Այդ իսկ պատճառով կիրառված մոտեցումը նման էր բյուջեով կիրառվող մոտեցմանը, այն է՝ այդ ծախսերը ներառված են “Պարաբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ” ծրագրում: Նույնը կիրառվել է նաև բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների դեպքում:

Ջրային ոլորտ

Ներկայացված ծրագրերից հատկապես դժվար էր տարանջատել ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերը, քանի որ դրանք խիստ փոխկապակցված են միևնույն համակարգում: Որոշակի հատուկ ուսումնասիրություններ թույլ են տալիս ենթադրել, որ երբ ծրագրերը իրենց մեջ կրել են երկու բաղադրիչները միաժամանակ, ապա հիմնականում ծախսերն ուղղված են եղել դեպի ջրամատակարարման հետ կապված

գործունեությունը: Այսպիսով, ծախսերի բաշխումն ըստ ծրագրերի կատարելիս, ենթադրվել է, որ ծախսերը հատկացվել են ջրամատակարարման ծրագրին, եթե չկա հատուկ տեղեկատվություն կոյուղու համակարգում կատարված ներդրումների վերաբերյալ: Այն ծրագրերի դեպքում, որոնց համար հասանելի էր հատուկ տեղեկատվություն ջրահեռացման բաղադրիչների մասով, համապատասխան ծախսերը հատկացվել են “Կոյուղի” ծրագրին:

Ծախսերի սահմանման և տարանջատման հետ կապված մեկ այլ խնդիր առնչվում է արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերին (օրինակ, Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագիրը), որտեղ հնարավոր չի եղել պարզել աշխատավարձի բաղադրիչը, քանի որ նման արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերում առկա է աշխատավարձերի մասին տեղեկությունների ցածր թափանցիկություն: Սակայն հիմնվելով մեր՝ որոշակի ուսումնասիրությունների վրա, հաշվարկվել է, որ նմանատիպ ծրագրերում ընթացիկ ծախսերի մեջ աշխատավարձի բաղադրիչը կազմում է մոտ 45%, ինչը կիրառվել է նաև մեր աղյուսակներում:

Ենթադրվել է նաև, որ ջրային ոլորտի ընկերությունները տվյալ փուլում շահույթ չեն ստանում¹²: Այս կազմակերպություններն ազատված են բնապահպանական վճարների պարտավորությունից: Ավելին, ջրի սակագներում չեն հաշվառվում կապիտալ ծախսերի ծավալները: Վերը նշված բոլոր գործոններից ելնելով, ներկայիս սակագների դեպքում շահույթ ստանալ հնարավոր չէ: Այսպիսով, ենթադրվում է, որ օպերատորները իրենք ներդրումներ չեն կատարում ենթակառուցվածքներում, իսկ այս ոլորտում ծախսերի հիմնական ինստիտուցիոնալ աղբյուրներ են հանդիսանում պետական բյուջեն և դոնորները:

¹² Գոյություն ունեն որոշակի դեպքեր, երբ ընկերությունը շահույթ է ստացել և այնույետև օգտագործել այն ներդրումների համար, սակայն, նման դեպքերը հազվադեպ են տեղի ունենում

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ընդհանուր արդյունքներ

Սկսած 2003թ. Հայաստանի հանրային ծախսերի քաղաքականությունը ղեկավարվում և ուղղորդվում է Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրով (ԱՀՌԾ), որն ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից և պարբերաբար վերանայվել է: Այս փաստաթուղթը դարձավ կառավարության գլխավոր ռազմավարական ծրագիրը՝ տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականությունների մասով և սահմանեց կառավարության գործունեության և պետական բյուջեի հատկացումների առաջնահերթ ոլորտները: ԱՀՌԾ-ին զուգահեռ, հանրային ծախսերի կառավարման համակարգում ներդրվեց միջնաժամկետ ծախսային ծրագիրը (ՄԺԾԾ)՝ ընդունված քաղաքականությունները և ռազմավարությունները տարեկան բյուջետավորման և միջոցների հատկացման հետ փոխկապակցելու նպատակով: Այս ծրագիրը մշակվել էր պետական ծախսերի եռամյա պլանավորման նպատակով և պետք է վերանայվի տարեկան կտրվածքով՝ քաղաքականության փոփոխությունները և հաջորդ բյուջետային տարվա կանխատեսումները ներառելու նպատակով: ՄԺԾԾ-ն արտացոլում է պետական քաղաքականությունները և առաջնահերթությունները՝ ապահովելով մանրամասն պլանավորում և ծախսերի հաշվարկ և հիմք է հանդիսանում տարեկան պետական բյուջեների մշակման համար:

Միջնաժամկետ պլանավորման գործընթացի ազդեցությունն ընդլայնվեց երկրում ծրագրային բյուջետավորման որոշակի էլեմենտների ներդրման միջոցով: Մասնավորապես, կառավարությունն սկսեց բյուջետային փաստաթղթերում ներառել որոշ հիմնական արդյունքների տվյալներ: Սույն հաշվետվությունը նաև հնարավորություն կտա կառավարության որոշում կայացնողներին՝ համապատասխանեցնել իրենց կողմից հայտարարված ռազմավարությունները ագրեգացված բյուջետային տվյալների հետ: Ինչպես նշված է վերևում, եթե բյուջեում առկա են մի քանի տասնյակ ծրագրեր/նախագծեր/միջոցառումներ (օրինակ՝ կրթության ոլորտում), որոնք կապակցված են մի քանի առանցքային քաղաքականությունների հետ, ապա ցանկացած որոշում կայացնողի համար դժվար է դառնում կապել հայտարարված քաղաքականությունը՝ խելամիտ և կիրառելի մակարդակով ագրեգացված որոշակի բյուջետային հատկացումների հետ:

Այսպիսով, սույն հաշվետվության ամենակարևոր արդյունք է հանդիսանում տվյալների՝ ավելի ընկալելի ձևաչափերով և բյուջետային հատկացումների մակարդակներով ներկայացնելու կարողությունը, որոնք ուղղակիորեն կապված են քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման մակարդակի հետ:

Ստորև ներկայացված է ավելի որոշակի քննարկում ըստ ոլորտների, ինչպես նաև վերլուծություն՝ քաղաքականություն-բյուջե-արդյունք կապի վերաբերյալ:

Կրթություն

ԱՀՌԾ-ն և, այնուհետև, ՄԺԾԾ-ն սահմանել են Հայաստանի կրթական համակարգը որպես պետական ծախսերի ամենաառաջնային ոլորտներից մեկը: Պետական բյուջեի հատկացումները 2006-2009թթ. ժամանակահատվածի համար կազմել են միջինում 14% տարեկան, ինչը հանգեցրել է կրթական ծախսերի 20% միջին տարեկան անվանական աճի: Սա իր հերթին հանգեցրեց նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ում կրթական պետական ծախսերի մասնաբաժնի աճին՝ 2.5%-ից մինչև 3.0%:

Ինչպես ցույց են տալիս ԾԲՎ աղյուսակները, կրթական պետական ծախսերի մեծագույն բաժինը հատկացվում է միջնակարգ ընդհանուր կրթության ենթաոլորտին. միջինում 85% 2006-2009թթ. համար: Միջնակարգ ընդհանուր կրթության դպրոցների ընթացիկ ֆինանսավորումը նույն ժամանակահատվածի համար աճեց 44.9 մլրդ. ՀՀ դրամից մինչև 75.6 մլրդ. ՀՀ դրամ: Նույն ժամանակահատվածում միջնակարգ ընդհանուր կրթության աշակերտների թվաքանակը նվազեց 462800-ից մինչև մոտ 408900 մարդ՝ հանգեցնելով մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման մոտ 100% աճին՝ մոտ 97000 ՀՀ դրամից մինչև 179000 ՀՀ դրամ: Այս միտումների մասնավոր արդյունքներն էին դպրոցների պահպանման բարելավված պայմանները, ինչպես նաև դպրոցների ուսուցիչների աշխատավարձերի աճը մինչև մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը՝ ուսուցչի պաշտոնը աշխատաշուկայում դարձնելով ավելի գրավիչ և բարձրացնելով ուսուցիչների շահագրգրվածությունը՝ ուսուցման ավելի բարձր որակ և կրթության բովանդակության և մեթոդաբանության ընթացիկ բարեփոխումներին ավելի մեծ ներգրավվածություն ապահովելու գործում:

Ստորև ներկայացված է միջնակարգ ընդհանուր կրթության աշակերտների թվաքանակը (հիմնական արդյունքների տվյալներ)¹³.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|---------------|------------|------------|------------|------------|------------|
| Տարրական | 123,522 | 121,839 | 115,000 | 112,511 | 109,079 |
| Միջին | 237,761 | 223,586 | 213,424 | 210,312 | 201,925 |
| Ավագ | 101,529 | 91,356 | 86,164 | 86,113 | 81,600 |
| Ընդամենը | 462,812 | 436,781 | 414,588 | 408,936 | 392,604 |
| Ֆինանսավորում | 44,989,762 | 52,094,843 | 57,872,226 | 75,650,752 | 70,156,009 |

¹³ Հաշվի առնելով ակադեմիական և հիմնական օրացույցների շեղումը (սեպտեմբեր-հունիս և Հունվար-դեկտեմբեր) միջին ակադեմիական օրացույցի տվյալները փոխարկվել են տարեկանի

| | | | | | |
|--|-------|--------|--------|--------|-------|
| Մեկ աշակերտի հաշվարկով (միավորի գին), հազ. ՀՀ դրամ | 97.21 | 119.27 | 139.59 | 184.99 | 178.7 |
|--|-------|--------|--------|--------|-------|

Աշակերտների թվաքանակն այլ կրթական ենթաուղորտներում (հիմնական արդյունքների տվյալներ) ներկայացված է ստորև.

| | 2006 | | 2007 | | 2008 | | 2009 | |
|--|--------------------------|--------------------|--------------------------|--------------------|--------------------------|--------------------|--------------------------|--------------------|
| | Պետ. պատվերով ուսանողներ | Վճարովի ուսանողներ | Պետ. պատվերով ուսանողներ | Վճարովի ուսանողներ | Պետ. պատվերով ուսանողներ | Վճարովի ուսանողներ | Պետ. պատվերով ուսանողներ | Վճարովի ուսանողներ |
| Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթություն | | | | | | | | |
| 1. Նախնական մասնագիտական կրթություն | 2880 | 83 | 3948 | 147 | 4129 | 115 | 4269 | 312 |
| 2. Միջին մասնագիտական կրթություն | 21156 | 6681 | 21144 | 7161 | 21385 | 7513 | 21157 | 8475 |
| Բարձրագույն և հետբուհական կրթություն | | | | | | | | |
| 1. Բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրիատ և մագիստրատուրա) | 20657 | 56600 | 20750 | 64779 | 20745 | 70292 | 21144 | 75474 |
| 2. Հետբուհական մասնագիտական կրթություն | 1309 | 219 | 1279 | 230 | 1203 | 211 | 1103 | 217 |
| Կրթության այլ մակարդակներին չդասված | | | | | | | | |
| 1. Արտադպրոցական կրթություն | 13549 | 21643 | 14256 | 21030 | 14175 | 21174 | 15063 | 22406 |


Դպրոցների ֆինանսավորման աճին զուգահեռ ընթանում էին միջնակարգ ընդհանուր կրթության որակի և համապատասխանության լայնածավալ բարեփոխումներ: Դրանք վերաբերվում էին հետևյալ առանցքային ուղղություններին.

1. Անցում 12-ամյա կրթությանը՝ եվրոպական կրթական ոլորտի հետ լիարժեք համապատասխանության նպատակով;

2. Միջնակարգ ընդհանուր կրթության պետական կրթակարգի, 12-ամյա կրթության առարկաների ծրագրի և ստանդարտների, ինչպես նաև նոր առարկաների դասագրքերի մշակում և ներդրում դպրոցի բոլոր դասարանների և առարկաների համար;
3. Գնահատման նոր համակարգի մշակում և ներդրում, այդ թվում՝ ըստ առարկաների և ընդհանուր գնահատում և Գնահատման և թեստավորման կենտրոնի ստեղծում՝ միասնական ավարտական և բուհական ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով;
4. Համակարգչային սարքավորումների մատակարարում Հայաստանի բոլոր դպրոցներին՝ բարձրացնելով երկրում համակարգիչ/աշակերտ հարաբերակցությունը 1/300-ից մինչև համարյա 1/30;
5. Դպրոցական ինտերնետային ցանցի ստեղծում՝ ներկայումս ներառված 640 դպրոցներով և պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող՝ բարձր արագության 24 ժամյա ինտերնետ միացում;
6. Էլեկտրոնային ուսուցողական նյութերի, ուսուցանվող առարկաների համակարգչային ծրագրերի մշակում և մատակարարում դպրոցներին՝ մոտ 10 առարկաների մասով, ինչպես նաև լիարժեքորեն գործող դպրոցական ինտերնետային պորտալի ստեղծում (www.armedu.am);
7. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հիմնում՝ դպրոցական ուսուցման և սովորելու գործընթացներում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ինտեգրման բարեփոխումները համակարգելու և պահպանելու նպատակով;
8. Ուսուցիչների էքստենսիվ ուսուցման արշավների իրականացում՝ նոր ուսումնական պլանի, առարկաների ծրագրի, գնահատման, ուսուցման գործընթացում S2S կիրառման, խմբակային ուսուցման մեթոդների և այլ թեմաներով, ինչպես նաև բոլոր տեսակի դասընթացներում մոտ 60000 ուսուցիչների մասնակցության ապահովում;
9. Միջնակարգ դպրոցների անցում ըստ մուտքային տողերի պետական բյուջեի ֆինանսավորումից դեպի ընդհանուր գումարով ֆինանսավորում՝ հիմնված մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման բանաձևի վրա, ինչպես նաև դպրոցների անկախության և ինքնակառավարման մակարդակի բարձրացում;
10. Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծման ծրագրի մեկնարկը, որը պետք է ընդգրկի 150-200 ավագ դպրոցներ;
11. Նախադպրոցական կրթության զարգացման ծրագրի մեկնարկը՝ դպրոցներում, մանկապարտեզներում և այլուր ցածր ծախսերով նախադպրոցական միկրո-ծրագրերի ներդրման համար:

Միջնակարգ ընդհանուր կրթության ֆինանսավորման զգալիորեն աճող ուղղություններից մեկն էր հանդիսանում դպրոցների շենքերի շինարարությունը և վերանորոգումը, ինչպես նաև լոկալ, գազով աշխատող ջեռուցման համակարգերի տեղադրումը դպրոցներում: Այս նպատակներով 2006-2008թթ. կատարված կապիտալ ծախսերը (ներքին և դոնորների ֆինանսավորմամբ) կազմել են համապատասխանաբար

17 մլրդ. և 25 մլրդ. ՀՀ դրամ՝ հանգեցնելով մոտ 600 դպրոցների վերանորոգմանը և կառուցմանը: 2009թ. պետական բյուջեով միջնակարգ ընդհանուր կրթության կապիտալ ծախսերի համար հատկացվեց 27 մլրդ. ՀՀ դրամ, սակայն ֆինանսա-տնտեսական ճգնաժամը զգալի վնաս հասցրեց Հայաստանի տնտեսությանը և կրճատեց հարկերի հավաքագրումը 2009թ.: Արդյունքում, նախատեսված վերանորոգման և շինարարական աշխատանքների մեծ մասը հետաձգվեց, և դրանց իրականացումն ամենայն հավանականությամբ կդադարեցվի մինչև տնտեսության և պետական բյուջեի վերականգնումը:



2010թ. պետական բյուջեի նախագծով կապիտալ ծախսեր համարյա նախատեսված չեն. Ընդհանուր կրթության մոտ 97%-ը կազմում են ընթացիկ ծախսերը: Պլանավորված չեն վերանորոգման կամ շինարարական աշխատանքներ և հետաձգվել են նախկինում 2010թ. համար նախատեսված մի քանի այլ ներդրումային ծախսեր: Ընթացիկ ծախսերը 2010թ. համար կազմում են 2009թ. նույն ծախսերի մոտ 88%: Դպրոցների ընթացիկ ֆինանսավորումը կրճատվել է 75 մլրդ. ՀՀ դրամից մինչև 70 մլրդ. ՀՀ դրամ, սակայն այս կրճատումը պայմանավորված չէ մեկ աշակերտի հաշվով ֆինանսավորման կրճատմամբ (միավորի ծախսի կրճատում), այլ ավելի շատ աշակերտների թվաքանակի կրճատման արդյունք է, ինչն էլ իր հերթին պայմանավորված է բնակչության ժողովրդագրական փոփոխություններով:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտը, բյուջեն և քաղաքականությունները գտնվում են բնակչության հետաքրքրության կենտրոնում և դա իր ազդեցությունն ունի

կառավարության քաղաքականության մշակման գործընթացների և հասարակական վարքի վրա: Առողջապահական ոլորտի առաջնահերթությունները, թիրախները և ծրագրային նախաձեռնություններն արտացոլված են Միջնաժամկետ Ծախսային Ծրագրում, Ոլորտի ռազմավարական ծրագրերում (“Մոր և մանկան”, “Առողջության առաջնային պահպանում” ռազմավարություններ) և այլն: Անցումային շատ երկրներում, ինչպիսին Հայաստանն է, առողջապահական ոլորտը հաճախ ստանում է ՀՆԱ-ի (կամ բյուջեի) որոշակի մասնաբաժին և հետո ոլորտի պատասխանատուները փորձում են տեղավորել բոլոր առաջնահերթությունները այդ սահմանափակող ծավալների մեջ (որոնք կարող են իրատեսական չլինել և հայտարարված քաղաքականություններին համարժեք չհանդիսանալ):

Հայաստանում առողջության առաջնային պահպանման ոլորտը և դրա զարգացումը հայտարարված է որպես առաջնահերթություն: Կառավարությունը տարեց տարի ավելացնում է բյուջետային հատկացումների ծավալը այս ոլորտին՝ հայտարարված նպատակներին հասնելու համար: Այդպիսով, ընդհանուր առողջապահական հատկացումների մեջ առողջության առաջնային պահպանման ծառայությունների մասնաբաժինը մշտապես ավելանում է:

Արդյունքում վերջին տարիներին արձանագրվել է բնակչության կողմից առողջության առաջնային պահպանման ծառայությունների օգտագործման մակարդակի զգալի աճ (ինչը դրականորեն է խոսում քաղաքականություն-բյուջե-արդյունք շղթայի մասին):

Առողջության առաջնային պահպանման ծառայությունների թվի աճը կարելի է բացատրել և՛ ծառայությունների հասանելիության բարելավմամբ և՛ բնակչության առողջության ընդհանուր մակարդակի անկմամբ: Արդյունքների ցուցանիշները կարող են ինչ որ չափով լուսաբանել դրա պատճառները:

Համաձայն Առողջապահության նախարարության վիճակագրական տվյալներին, առողջության առաջնային պահպանման ծառայությունների թիվը մշտապես աճում է սկսած 2001թ. (1.8 հարաբերակցությամբ): Նկատվում է նաև աճ հիվանդանոցային ծառայությունների ոլորտում: Ավելին, դեպքերի թիվը (առաջին անգամ ախտորոշված հիվանդության գրանցման) նույնպես աճել է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են ընդհանուր տվյալներ առողջապահական ծառայությունների դինամիկայի վերաբերյալ.

| | 2006 | 2007 | 2008 |
|--|------|------|------|
| ԱԱՊ հաճախումները մեկ բնակչի հաշվով կազմել է | 2.8 | 2.8 | 3.3 |
| Հիվանդանոց ընդունված հիվանդների թվաքանակը, 10000 բնակչի հաշվով | 5 | 5.3 | 5.6 |

| | | | |
|--|--------|--------|--------|
| Առաջին անգամ ախտորոշված հիվանդությունների քանակը | 471082 | 479302 | 533684 |
| Բնակչության ընդհանուր հիվանդացությունը (մեծահասակներ և դեռահասներ) | 892332 | 920141 | 999981 |

Ամենակարևոր հիվանդությունների տիպերն ըստ տարիների հետևյալն են.

| | 2006 | 2007 | 2008 |
|---|--------|--------|--------|
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ | 123189 | 133614 | 151047 |
| Շնչառական օրգանների հիվանդություններ | 185685 | 189360 | 210511 |
| Մարսողական օրգանների հիվանդություններ | 73375 | 74805 | 76673 |
| Հղիության, ծննդաբերության և հետծննդաբերության շրջանի բարդություններ | 19948 | 19153 | 18865 |
| Արյան շրջանառության համակարգի հիվանդություններով պայմանավորված մահացության դեպքեր | 13587 | 13504 | 13681 |
| Նորագոյացություններով պայմանավորված մահացության դեպքեր | 5188 | 5221 | 5505 |
| Շնչառական օրգանների հիվանդություններով պայմանավորված մահացության դեպքեր | 2008 | 1893 | 1792 |

2008 թվականին ծննդոգնության ծառայությունները հայտարարվեցին առաջնահերթ: Այսպիսով, այդ պահից սկսած հարաճուն տեմպերով ավելացան բյուջետային հատկացումների ծավալները՝ ավելի մեծ մասնաբաժին կազմելով ընդհանուր առողջապահության բյուջեի մեջ: Որպես բարեփոխումների առանցքային հատված, ապագա ծնողներն սկսեցին ստանալ ծննդոգնության ծառայությունների հավաստագրեր, ինչն ապահովեց կառավարության կողմից ծառայությունների լիարժեք փոխհատուցումը:

Ըստ ընթացիկ մոնիտորինգի տվյալների, քաղաքականության հայտարարված փոփոխություններն ունեն դրական ազդեցություն ծնունդների աճի խթանման տեսանկյունից: Քաղաքականությունն ազդեցություն է ունեցել այս ոլորտին կառավարության ցուցաբերած աջակցության լիարժեքության և ծննդոգնության ծառայությունների ավելի հասանելի և որակյալ դառնալու ուղղությամբ: Դրան աջակցելու նպատակով կառավարությունը նաև խթանել է բժշկական անձնակազմի աշխատավարձերի՝ մի քանի անգամ բարձրացումը, իսկ ՀՀ առողջապահության նախարարությունը զգալի ջանքեր է գործադրում այս գործընթացի կանոնավոր

մոնիտորինգի ուղղությամբ: Առողջապահության նախարարության վիճակագրությունը տրամադրում է այս ոլորտի հետևյալ տվյալները.

| | 2006 | 2007 | 2008 |
|---------------------------------|-------|-------|-------|
| Բնական աճը, 10000 բնակչի հաշվով | 3.24 | 4.11 | 4.26 |
| Կենդանաձնություն | 37639 | 40105 | 41185 |

Պետք է նկատել, որ քաղաքականություն-բյուջե-արդյունք մոդելային սխեմայում կապը դեռևս թույլ է: Նախարարությունները և գործակալությունները արդյունքների մասին հաշվետվությունների համար և բյուջեի պլանավորման ընթացքում հիմնականում օգտագործում են հիմնական քանակական ցուցանիշներ: Չափազանց վաղ է նաև ամուր կապ արձանագրել հատկացված բյուջետային միջոցների (աճողական փոփոխություններ) և կանխարգելիչ առողջապահության և այլ արդյունքների միջև: Կառավարման նման թույլ մշակույթը կապվում է նաև պատշաճ Պետական ֆինանսական կառավարման գործընթացների սուղ ֆինանսավորման հետ, որոնք կարող են օգնել՝ բարելավման և քաղաքականությունները բյուջեներին կապելու հարցում:

Այնուամենայնիվ փաստ է, որ առողջապահության ոլորտում բյուջետային ներդրումները կայուն կերպով բարելավվում են, ուստի և անհրաժեշտ է բարելավել բյուջեի հիմնավորումները՝ կիրառելով արդյունքների վրա հիմնված բյուջետային մոտեցումներ:

Առողջապահության նախարարությունը նպատակ ունի մշակել “Առողջապահական համակարգի արդյունքների գնահատման” մեխանիզմ, որը կլրացնի ծրագրային բյուջետավորման ներդրման ջանքերը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ամփոփ տվյալներ առողջապահական ընդհանուր ծախսերում պետության և տնային տնտեսությունների համեմատական մասնաբաժինների վերաբերյալ՝ ըստ սույն հաշվետվությունում սահմանված ծրագրերի: Ցավոք տվյալները հասանելի են միայն 2008թ. համար (ինչը մեր սեփական ուսումնասիրության արդյունք է, քանի որ դինամիկ պատկեր ստանալու համար ոչ մի արտաքին աղբյուր հասանելի չէր): Ինչևէ, նույնիսկ նշված մեկ տարվա կտրվածքով նկատելի է, որ պետությունը համարյա բոլոր ծրագրերում առանցքային դեր ունի առողջապահական ծառայությունների մատուցման մասով, հատկապես՝ առողջության առաջնային պահպանման և մանկաբարձա-գինեկոլոգիական ծառայությունների ուղղությամբ, որտեղ կառավարությունը հայտարարել է աջակցության առաջնահերթություն: Կարելի է նկատել, որ այն ոլորտը, որը քաղաքականության

տեսանկյունից հատուկ ուշադրության չի արժանացել, օրինակ՝ հիվանդանոցային ծառայությունները, ընդհանուր ծախսերում պետության մասնաբաժնի մասով բավական հետ է մնում այլ ծրագրերից: Փաստորեն, այն նույնիսկ 50%-ի մակարդակից էլ ցածր է, ինչը նշանակում է, որ այդ ծրագրի դեպքում բնակչությունը ինքն է հոգում ծախսերի մեծ մասը:

| 2008 տվյալներ, հազ. ՀՀ դրամ | Ծախսեր | | | % ընդամենից | |
|---|-------------------|-------------------|-------------------|-------------|------------|
| | պետություն | SS | Ընդամենը | պետություն | SS |
| Արտահիվանդանոցային ծառայություններ | 18,280,513 | 9,587,080 | 27,867,593 | 66% | 34% |
| Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ | 5,108,887 | 1,371,330 | 6,480,217 | 79% | 21% |
| Հիվանդանոցային ծառայություններ | 14,889,779 | 17,179,516 | 32,069,295 | 46% | 54% |
| Հանրային առողջապահական ծառայություններ | 2,829,200 | 2,139,454 | 4,968,654 | 57% | 43% |
| Հարբժշկական ծառայություններ և այլ աջակից ծառայություններ | 12,454,542 | 297,146 | 12,751,688 | 98% | 2% |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 910,534 | - | 910,534 | 100% | 0% |
| Ընդամենը | 54,473,455 | 30,574,527 | 85,047,982 | 64% | 36% |

Ջրային տնտեսություն

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տարի զգալի միջոցներ են ուղղվում ջրային ենթակառուցվածքների ոլորտ՝ հիմնականում զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով (ներդրումներ ենթակառուցվածքներում): հիմնանորոգմանը և բարելավմանը: Ընդ որում, 2009-2010թթ. նախատեսվում է նույնատիպ միտում: Բերված ցուցանիշներից կարելի է հանգել հետևյալ ընդհանուր բնույթի եզրահանգումների.

1. 2006-2008թթ. ջրային ոլորտին ուղղված միջոցներից ընթացիկ ծախսերը մեծ տեսակարար կշիռ են ունեցել ընդհանուր ծախսերի մեջ: Սակայն ընթացիկ ծախսերի տեսակարար կշռի մեծությունն ընդհանուր ծախսերի մեջ անկման միտում ունի: Այս փաստը վկայում է այն մասին, որ տարեց տարի ջրային ենթակառուցվածքներն ենթարկվում են ավելի մեծ մաշվածության, ինչպես նաև այս խնդրի լուծմանն ուղղված կառավարության ձեռնարկած միջոցառումների,

այսինքն՝ ենթակառուցվածքները գործառնական վիճակում պահպանելու համար մեծ ներդրումների ներգրավման ու լայնամասշտաբ ծրագրեր նախաձեռնելու մասին:

2. Աշխատավարձի չափաբաժինն ջրային ոլորտին ուղղվող ընդհանուր ընթացիկ ծախսերի մեջ ունեցել է չնչին տեսակարար կշիռ՝ մինչև 10%: Այս փաստը թերևս պայմանավորված է ենթակառուցվածքների զարգացման համեմատաբար բարձր ծախսերով և ոլորտում քաղաքականության մշակման և հետազոտությունների իրականացման համար պահանջվող ցածր ծախսերով: Բացի այդ, ոլորտում առկա աշխատավարձերի ընդհանուր մակարդակը ցածր է:
3. Դոնորների կողմից իրականացվող ֆինանսավորումը մշտապես մեծ դեր է ունեցել ենթակառուցվածքների զարգացման գործում և ոլորտի ֆինանսավորման զգալի մասնաբաժին է կազմում:
4. Ջրահեռացման համակարգի բարելավման ու հիմնանորոգման ծրագրերը նախատեսվել են միայն 2008թ.-ից, իսկ լուրջ ներդրումներ նախատեսվում է կատարել 2009-2010թթ.: Մասնավորապես մեծածավալ ծրագիր է նախատեսված է Սևանա լճի ավազանում կոյուղու ցանցերի և մաքրման ենթակառուցվածքների կառուցման նպատակով:

Ընդհանուր առմամբ, ջրային ոլորտում ծրագրերի արդյունավետության և արդյունքների գնահատման տեսանկյունից հարկավոր է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները: 2006-2009թթ. ընթացքում ջրային տնտեսության ոլորտում պլանավորված/իրականացված ծրագրերը հիմնված էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթներով, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի կառավարմանը նվիրված որոշումներով (այդ թվում^a Աղքատության հաղթահարման աջակցության ռազմավարությունը - ԱՀՌԾ-ն) նախատեսված կարգավորման վրա: Այդ բոլորը միասին սահմանել են ջրային ոլորտի զարգացման առաջնահերթությունները, նպատակները և թիրախները:


Այդ առումով իրականացված ծրագրերը ճիշտ կերպով նպատակուղղված են եղել և դրական արդյունքներ են նկատվել համակարգում կառուցվածքային բարեփոխումների, հաշվառման/ կատարելագործման համակարգի ներդրման, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման մեխանիզմների, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում տեխնիկական կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման,

ջրաչափական սարքերի լայնամասշտաբ տեղադրման, բյուջետային և դոնորների միջոցների արդյունավետ օգտագործման և ոլորտում նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման և այլնի ուղղությամբ:

Համակարգի կազմակերպությունների գործառնությունների և արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրերն իրագործվում են և առկա է ոլորտի ընկերությունների հանդեպ բնակչության վստահության աճ՝ պայմանավորված վերը նշված բարելավումներով (մատակարարված ջրի դիմաց հավաքագրումների աճ):

Այսպես, 2008 թվականի տարեկան դինամիկան արձանագրում է, որ սպառված ջրի դիմաց վճարների գանձումն աճել է 1.38 մլրդ դրամով (ընդհանուրը կազմել է 15.93 մլրդ. դրամ, աճը կազմել է մոտ 10%): Խմելու ջրի դիմաց վճարների հավաքագրումն աճել է 770 մլն դրամով (կազմելով 12.49 մլրդ. դրամ), իսկ ոռոգման ոլորտում ավել է գանձվել շուրջ 610 մլն դրամ (կազմելով 3.44 մլրդ. դրամ):


2004-2008թթ. խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների գանձման ցուցանիշների համեմատական վերլուծություն (մլն դրամ)



Աղբյուր. ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված և փաստացի կատարված ոչ ֆինանսական և ֆինանսական ամփոփ հաշվետվություն

Ներդրվող միջոցների արդյունավետության մասին են փաստում նաև ջրամատակարարման տնտեսության աճի միտումները: Այս համատեքստում մատակարար բոլոր ընկերությունների մոտ արձանագրվել է բարելավում:


**2007-2008թթ. խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների
ջրամատակարարման միջին տևողության վերաբերյալ**



Աղբյուր. ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված և փաստացի կատարված ոչ ֆինանսական և ֆինանսական ամփոփ հաշվետվություն

Ինչպես արդեն նշվեց, բարեփոխումներն անդրադարձել են նաև ջրամատակարարման հաշվառման և ակտիվների օպտիմալացման ու հաշվառման գործընթացներին: Միաժամանակ շարունակվել է նաև ջրաչափական համակարգերի տեղադրման ծավալների աճը, որոնք ավելացել են 16 հազարից ավելի չափով:

2006թ. հունվարի 1-ի դրությամբ առկա և 2006-2008թթ. խմելու ջուր մատակարարող ընկերությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ տեղադրված ջրաչափերի վերաբերյալ



Աղբյուր. ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված և փաստացի կատարված ոչ ֆինանսական և ֆինանսական ամփոփ հաշվետվություն

Վերը նշվածը նաև համահունչ է խմելու ջրի մատակարարման ոլորտում բաժանորդների (սպառողների) թվաքանակի աճին: Վերջին տարիներին արձանագրված դինամիկան հետևյալն է.

| | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|-------------------|--------|--------|--------|--------|
| Բաժանորդների թիվը | 709046 | 713933 | 720235 | 725746 |

Համակարգում գործող բյուջետային և վարկային ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացված հիմնական կապիտալ շինարարական (ներդրումային) աշխատանքները ներառել են հիմնական և օժանդակ կառույցների կապիտալ վերանորոգում, ջրամբարների կառուցում, նորոգում և բարելավում, ջրամատակարարման և կոյուղու խողովակաշարերի օպտիմալացում և կառուցում և այլն:

Պետության և տնային տնտեսությունների հարաբերական դերերի տեսանկյունից պարզվում է, որ ջրային ոլորտը շատ ավելի քիչ է կախված պետական միջամտություններից, քան կրթությունն ու առողջապահությունը: Դա հատկապես կարևոր է խմելու ջրի մատակարարման դեպքում, որտեղ ընդհանուր ծախսերի մոտ 70% մասնավոր են: Սա չափազանց կարևոր ցուցանիշ է, որը թույլ է տալիս իրականացնել երկարաժամկետ գնահատում, ինչպես նաև գնահատել քաղաքականությունների տարբերակները՝ բյուջեի վերաբերյալ ապագայում որոշումներ կայացնելիս (օրինակ՝ խմելու ջրի ոլորտը սուբսիդավորելու վերաբերյալ):

| 2008, հազ. ՀՀ դրամ | Ծախսեր | | | % ընդամենից | |
|--------------------------------------|------------|------------|------------|-------------|-----|
| | պետություն | SS | Ընդամենը | պետություն | SS |
| Ջրամատակարարման համակարգ | 7,469,630 | 16,117,040 | 23,586,670 | 32% | 68% |
| Ջրահեռացման համակարգ | 174,802 | n/a | | | |
| Ոռոգման համակարգ | 9,529,957 | 8,235,055 | 17,765,011 | 54% | 46% |
| Քաղաքականության մշակում և կառավարում | 1,901,669 | - | 1,901,669 | 100% | 0% |
| Ընդամենը | 19,076,058 | 24,352,094 | 43,428,152 | 44% | 56% |

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության իրականացման ընթացքում ի հայտ են եկել հետևյալ բարդությունները.

Կրթություն

1. **Ծրագրերի վերախմբավորում:** ԾԲՎ պահանջների փաստաթղթում տրված՝ ծրագրերի խմբավորման մակարդակը չափազանց ընդհանրական էր և դժվար էր այն կիրառել Հայաստանի կրթական համակարգի համար: Ծրագրերի ընտրված կառուցվածքը ավելի ճկուն կերպով է արտացոլում պետական բյուջետավորման գործընթացում կրթության համար օգտագործվող՝ ներկա գործառնության կառուցվածքը: Այն նաև ներառում է բոլոր անհրաժեշտ տվյալները՝ ԾԲՎ պահանջների փաստաթղթում օգտագործվող ագրեգացման մակարդակի համար:
2. **Ծախսերի բաշխում:** Կրթական ծրագրերի պետական բյուջեի դասակարգման մեջ 2008թ. տեղի է ունեցել փոփոխություն՝ պայմանավորված անցումով դեպի GFS 2001: Մինչև 2008թ. ընդհանուր կրթության ծրագրերում ծախսերը տարանջատված չէին ըստ տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների: Այս ծրագրերի ծախսերը 2006 և 2007թթ. համար բաշխվել են տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներին՝ ելնելով յուրաքանչյուր ենթամակարդակի աշակերտների թվաքանակից: GFS 2001-ին անցումից հետո միջնակարգ ընդհանուր կրթության դպրոցների ֆինանսավորման ծրագրերին հատկացվող ծախսերը նոր դասակարգումով տարանջատվեցին ըստ տարրական, միջնակարգ և ավագ դպրոցների: Սակայն, միջնակարգ ընդհանուր կրթության և կրթության այլ մակարդակների բոլոր աջակցող ծրագրերը տեղափոխվեցին “Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ աջակից ծառայություններ” առանձին

դաս: Ծրագրային Բյուջետավորման Վերլուծության նպատակներից ելնելով, այս ծրագրերը կրկին վերաբաշխվեցին իրենց համապատասխան բաժիններ: Այդ դասում մնացին միայն այն ծրագրերը, որոնք հնարավոր չէր ուղղակիորեն կապել կրթական մակարդակներից որևէ մեկին:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում տնային տնտեսությունների սպառման/ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չէր հավաքագրել: 2008թ. համար պահանջվող ԾԲՎ աղյուսակը լրացնելու համար ՕԲՎ հարցաշարում ներառվեցին հատուկ պահանջներ (և որոշ անդրադարձ 2009թ. սպասումներին): Այսպիսով, ձեռք բերվեցին ելակետային տվյալներ և ներառվեցին վերլուծության արդյունքներում:

Ծախսերի դասակարգման վերաբերյալ դոնորների մասով տեղեկատվություն ստանալ հնարավոր չէր:

Ջրային տնտեսության ոլորտ

Վերլուծության իրականացման հետ կապված բարդություններից կարելի է հատկապես նշել աշխատավարձին ուղղվող ծախսերի և ծախսերի մեջ աշխատավարձի բաղադրիչի չափի վերաբերյալ տեղեկությունների ձեռք բերումը: Նշված ցուցանիշը սովորաբար չի ներկայացվում վիճակագրական տեղեկատուներում: Սակայն որոշ գնահատականներ տրվեցին՝ հիմնվելով խաչաձև հարցումների և ենթադրությունների վրա:

Ինչպես և առողջապահության ոլորտի պարագայում, տնտեսությունների սպառման/ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չէր ձեռք բերել: 2008թ. համար պահանջվող ԾԲՎ աղյուսակը լրացնելու համար 2008թ. ՕԲՎ հարցաշարում ներառվեցին հատուկ պահանջներ (և որոշ անդրադարձ 2009թ. սպասումներին)

ԳՈՐԾՆԹԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԸՆԴՀԱՅՆՈՒՄԸ

Բյուջետային ծախսերի ազդեցական և հատկացումը ծրագրերին ըստ ծրագրային բյուջետավորման սկզբունքների անհրաժեշտ, սակայն ոչ բավարար գործընթաց է՝ բյուջետային քննարկումները բարելավելու և քաղաքականության ու բյուջեի վերաբերյալ որոշումների կայացմանը աջակցելու համար:

Այս գործընթացի հնարավոր ընդլայնումները ներառում են.

